«ՀԱՅ ԴԱՏ» ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՎ 2

ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1914-1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«ՀԱՅ ԴԱՏ» ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԹԻՎ 2

www.armeniancause.am



ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1914-1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«ՀԱՅ ԴԱՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԵՐԵՎԱՆ • 2011

ՀՏԴ 941(479.25):329(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)+66.6
Ն152

Նազարյան Արամ
Ն152 ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1914–1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ/Արամ Նազարյան.– Եր.: «Հայ Դատ» հիմնադրամ, 2011.– 64 էջ:

Աշխատությունը նվիրված է Առաջին աշխարհամարտի ժամանակ հայ ազատագրական պայքարի կարևոր դրսևորումներից մեկի՝ կամավորական շարժման պատմությանը: Հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա պարզաբանել է շարժման առաջացման առարկայական պատճառները, համառոտ ներկայացրել է հայ կամավորական ջոկատների երկամյա ռազմական տարեգրությունը, վերհանել շարժման արդյունքները և նշանակությունը: Կամավորական շարժումը սկզբնավորեց հայկական ազգային ռազմական ուժի վերաստեղծումը: Հետևողական ու շարունակական ջանքերի արդյունքում այն վերածեց ազգային կանոնավոր զորքի, և առավելապես այդ զորքի շնորհիվ է, որ աշխարհամարտի ավարտին վերականգնվեց հայկական անկախ պետականությունը: Իսկ այս բոլոր գործընթացներում իր ծանրակշիռ ավանդն ունի հայության հասարակական–քաղաքական կյանքի՝ ժամանակի ամենաազդեցիկ ու ղեկավար ազգային ուժը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը:

ՀՏԴ 941(479.25):329(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)+66.6

ISBN 978–9939–9033–2–3

© Նազարյան Ա., 2011 թ.
© «Հայ Դատ» հիմնադրամ, 2011 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանը առանձնահատուկ փուլ է Հայաստանի պատմության մեջ: Այդ պատերազմը իսկական փորձության շրջան եղավ ոչ միայն հայության տարբեր հատվածների, այլ նաև նրա ազգային քաղաքական ուժերի և կուսակցությունների համար:

Ասվածը հատկապես վերաբերում է ժամանակի հայ իրականության առաջատար ուժին՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությանը:

Ընդհանրապես, Առաջին աշխարհամարտի նախօրեին և սկզբնական շրջանում ազգային կառույցների և ուժերի ու, մասնավորապես, Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը առարկայորեն լուսաբանելու համար անհրաժեշտ է խորամուխ լինել պատմական այդ ժամանակի աշխարհաքաղաքական զարգացումների, հայ ազատամարտի նախորդ փուլի արդյունքների և պայքարի հեռանկարների մեջ: Այս մոտեցումները հնարավորություն կընձեռեն մեզ հասկանալու և արժևորելու հայ քաղաքական ուժերի, անհատների նպատակադրումները, մտածելակերպը, նրանց գործունեության յուրահատուկ սոցիալ–քաղաքական ու հոգևոր–մշակութային միջավայրը: Այսինքն՝ մեկ ամբողջականության մեջ դիտարկելու պատմական–քաղաքակրթական այն պայմանները, որոնցում ապրում և պայքարում էր հայ ազգը, նրա հեղափոխական ու առաջադեմ ներկայացուցիչներն ու կազմակերպությունները:

Եթե մենք փորձենք այսօրվա մեր կյանքին ու մտածելակերպին բնորոշ չափանիշներով բացատրել ու գնահատել 1914–1918 թվականների հերոսական ու միաժամանակ ողբերգական ժամանակաշրջանը, ապա, անկախ մեր ցանկությունից, հեռանալու ենք իրական պատմությունից և չենք կարողանալու դեպքերը, մարդկանց, ազգային քաղաքական ու հոգևոր կառույցների գործունեությունը արժանվույնս գնահատել:

Եվ այսպես, սիրելի՛ ընթերցող, փորձ կատարենք միասին տեղափոխվելու ոչ այնքան հեռավոր պատմական ժամանակահատվածը ու տեսնելու մեզ հետաքրքրող իրադարձությունների զարգացման ընթացքը: Փորձենք միասին պարզել ու հասկանալ, թե ինչու սկսվեց հայ կամավորական շարժումը, որոնք էին դրա գլխավոր նպատակները, և ինչ արդյունքների այն հասավ:

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Պատերազմի նախօրեին վերաբացվել էր Հայկական հարցը և կրկին դարձել տերությունների միջև դիվանագիտական ու աշխարհաքաղաքական շահերի բախման առարկա: 1914 թ. հունվարի 26–ին կնքվեց ռուս–թուրքական համաձայնագիր, որով նախատեսվում էր արդեն որերորդ անգամ բարենորոգումներ իրականացնել Արևմտյան Հայաստանում: Սակայն արևմտահայության դրությունը իրականում ոչ միայն չփոխվեց, այլև ավելի ուժեղացավ երիտթուրքերի հայահալած քաղաքականությունը:

Մինչ այդ տեղի ունեցավ երիտթուրքերի կուսակցության հետ Հ.Յ.Դ. հարաբերությունների խզումը: Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդները մեծ հույսեր էին կապել աբդուլհամիդյան վարչակարգի տապալման հետ: Մեծ էր ոգևորությունը նաև հայկական միջավայրում: Սակայն շատ կարճ տևեց սահմանադրական կարգերի հռչակման հետ կապված ոգևորությունը: Սկզբում երիտթուրքական առաջնորդները հմտորեն թաքցնում էին իրենց ազգայնամոլական էությունը՝ ներկայանալով որպես Օսմանյան կայսրության մեջ ապրող ժողովուրդների իրավունքների պաշտպան:

Հայ Յեղափոխական Դաշնակցության մի շարք ակնառու գործիչներ՝ Ռոստոմը, Արամը, Իշխանը, Ա. Վռամյանը (Օ. Դերձակյան), Վ. Փափազյանը, ինչպես նաև փորձառու շատ ֆիդայիներ, վերապահ էին երիտթուրքական «հեղափոխության» նկատմամբ:

Հարկ է նշել նաև, որ հեղաշրջումից հետո՝ սկզբնական շրջանում, ստեղծվել էր պատմական հնարավորություն՝ հաշտեցնելու երկու ժողովուրդներին և, առանց արտաքին ուժերի միջամտության, համատեղ որոնելու Արևմտյան Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ փոխադարձ ընդունելի տարբերակ:

Կյանքը ցույց տվեց, սակայն, որ իշխանությանը տիրացած երիտթուրքերը պատրաստ չեն նման երկխոսության: Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող ժողովուրդների ազգային–ազատագրական շարժումների աճը, մասնավորապես XX դարի սկզբներին իտալա–թուրքական և բալկանյան պատերազմները ստիպեցին թուրքական պետությանը որդեգրել նոր գաղափարախոսություն՝ պանթյուրքիզմը, որը դարձավ երիտթուրքական կուսակցության և վարչակարգի վարած ներքին ու արտաքին քաղաքականության առանցքը: Երիտթուրքերը գնացին սահմանադրական միապետության ազգային հիմնախնդիրները, առաջին հերթին՝ Հայկական հարցը, ամենավայրագ ու բարբարոսական մեթոդներով լուծելու ճանապարհով: Արդյունքում հայ–թուրքական փոխզիջումը չկայացավ:

1913 թ. օգոստոսին Կարինում (Էրզրում) գումարված Դաշնակցության յոթերորդ ընդհանուր ժողովը վերջնական ու սկզբունքային գնահատական տվեց Հ.Յ.Դ.–երիտթուրքեր հարաբերություններին: Այդ կապակցությամբ «Դրոշակը» 1913 թ. իր համարներից մեկում գրել է. «Ցրենք վերջապէս մահաբեր պատրանքը: Ժամանակն է՝ նողկանքով երես դարձնենք թուրք պաշտօնական շողոքորթ ժպիտներից, որոնք ամէնէն վտանգաւոր դաւերն եղան մեր ժողովուրդի գոյութեան դէմ»:

Ի հակազդեցություն խզման՝ երիտթուրքերն ուժեղացրին ահաբեկման մարտավարությունը, սկսեցին հայերին պաշտոնազրկել, բռնազավթել նրանց հողերը, իրդեհել ունեցվածքը, մահմեդական մոլեռանդ ամբոխին գրգռել նրանց դեմ, ավելի հաճախացնել բռնություններն ու սպանությունները:

Հայկական հարցի վերաբացման պայմաններում հայկական նահանգներում տարվելիք աշխատանքներն այդ ժամանակ այնքան մեծ կարևորություն էին ստացել, որ ընդհանուր ժողովը որոշեց կատարել կանոնադրական փոփոխություն, այն է՝ Հ.Յ.Դ. Արևելյան և Արևմտյան բյուրոներից բացի՝ հիմնվեց նաև Հայաստանի բյուրո: Նրա իրավասության շրջանակի մեջ էին մտնում Արևմտյան Հայաստանի վեց և Տրապիզոնի նահանգները:

Ռուս–թուրքական համաձայնագրի կնքումից հետո Դաշնակցությունը հիասթափություն արտահայտեց Հայկական հարցի վերաբացման արդյունքում ստորագրված այդ փաստաթղթի վերաբերյալ: Այն Հայաստանին տալիս էր ոչ թե ինքնավարություն, այլ ընդամենը բարենորոգումներ առանց միջազգային երաշխիքների:

Քաղաքական նոր ու բարդ իրադրության թելադրանքով 1914 թ. հուլիսին դարձյալ Կարինում իր աշխատանքներն սկսեց Հ.Յ.Դ. ութերորդ ընդհանուր ժողովը, որին մասնակցում էր 30 պատվիրակ: Այն տևեց երկու շաբաթ, և կայացած 28 նիստերի ընթացքում քննարկվեցին հայկական բարենորոգումների, պատերազմի մասին, արևմտահայության ինքնապաշտպանության հարցերը և այլն:

Ընդհանուր ժողովը, քննելով բարենորոգումների ռուս–թուրքական համաձայնագրի հարցը, նպատակահարմար չգտավ աջակցել այդ ծրագրի իրականացմանը: Իսկ օսմանյան կառավարությունն ամեն կերպ ձգտում էր արգելքներ հարուցելու առանց այն էլ չափավոր այդ ծրագրի իրականացմանը, որը աշխարհամարտի սկսվելուն պես խափանվեց:

Ութերորդ ընդհանուր ժողովը, հաշվի առնելով, որ կուսակցության գործունեության ծանրության կենտրոնն աստիճանաբար տեղափոխվել է Հայրենիք, որոշեց լուծարել Արևմտյան բյուրոն՝ պահպանելով Հայաստանի (կենտրոնը՝ Կ. Պոլիս) և Արևելյան (կենտրոնը՝ Թիֆլիս) բյուրոները: Այսինքն՝ համագումարը որդեգրեց հայաստանակենտրոն գործունեություն:

Կամավորական շարժման հարցն օրակարգում չկար, բայց այն արծարծվեց, կազմվեց իննհոգանոց մի հանձնաժողով: Սակայն պատերազմի սկսվելու պատճառով համագումարն ընդհատեց իր աշխատանքները, իսկ հիշյալ հանձնաժողովն այդպես էլ չհասցրեց լիովին քննարկել կամավորական շարժման հարցը:

Հ.Յ.Դ. ութերորդ ընդհանուր ժողովի մասնակիցները, Կարին, 1914 թ. հուլիս

Ընդհանուր ժողովի կայացրած որոշման համաձայն՝ սպասվող ռուս–թուրքական պատերազմում հայերը պետք է չեզոք դիրք բռնեին. որպես իրենց երկրների հպատակներ և՛ արևելահայերը, և՛ արևմտահայերը պետք է կատարեին իրենց զինվորական պարտականությունը: Պատերազմի ժամանակ հայ ժողովրդի անվտանգությունը և թիկունքում կարգուկանոնն ապահովելու նպատակով Օսմանյան կայսրության հայկական բնակավայրերում, որտեղ անհրաժեշտ էր, պետք է լինեին որոշակի քանակությամբ հայ զինվորներ՝ կառավարության կողմից տրված հրացաններով զինված: Այդ վայրերում «պետք է ավելացնել գյուղական պարեկներին, ժանդարմական ուժերի մեջ մտցնել նաև հայերին՝ բնակչության համամասնության չափով»: Միաժամանակ արձանագրվեց, որ «Դաշնակցությունը մնում է որպես ընդդիմադիր ուժ և անաչառ քննադատ երիտթուրքերի կառավարությանը»:

Էրզրումի ութերորդ ժողովի մասնակից Ռուբեն Տեր–Մինասյանը փաստում է. «Ընդհանուր ժողովը հրահանգում էր հայութեան երկու հատուածներին՝ ուղղամտօրեն կատարել իրենց քաղաքացիական պարտականութիւնները թէ՛ Թուրքիոյ և թէ՛ Ռուսաստանի հանդէպ»: Իսկ Ս.Վրացյանն իր հուշերում այս խնդրի կապակցությամբ նույնպես գրում է, որ ժողովն իր մարմիններին ու ընկերներին հրահանգում էր «մնալ օրինապահ իրենց ապրած երկրի վերաբերմամբ եւ կատարել իրենց բաժին հասած քաղաքացիական պարտականութիւնները»:

Ռոստոմ (Ստեփան Զորյան)

Սիմոն Վրացյան

Այդ օրերին երիտթուրքերի կուսակցության գործիչներ Բեհաէդդին Շաքիրը, Նաջի բեյը և Հալիմ բեյը, Կովկասի ու Պարսկաստանի մահմեդական ներկայացուցիչների հետ միասին եկան Էրզրում՝ Հ.Յ.Դ. ներկայացուցիչների հետ բանակցելու, վերջիններիս դիրքը պարզելու նպատակով: Վռամյանը, Ակնունին և Ռոստոմը թուրք պատվիրակներին հայտնեցին Դաշնակցության որոշումը հայերի չեզոքության մասին, միաժամանակ զգուշացրին թուրքերին՝ չնետվել համաեվրոպական պատերազմի հորձանուտը, որը կարող է կործանման հասցնել Օսմանյան կայսրությանը:

Թուրքական բանագնացները ներկայացրին իրենց ծրագիրը, որի նպատակն էր վրացիներին, հայերին, Կովկասի ու Պարսկաստանի հյուսիսի մահմեդականներին ոտքի հանել Ռուսաստանի դեմ, կազմակերպել նրանց ապստամբությունը ռուսական զորքերի թիկունքում: Պատերազմի հաղթական ավարտից հետո երիտթուրքերը խոստանում էին ինքնավարություն շնորհել նրանց. հայկական ինքնավարության տարածքը կազմելու էին Երևանի նահանգը, Կարսի մարզը, Գանձակի նահանգի մի մասը, Վանի, Բիթլիսի վիլայեթները և Էրզրումի վիլայեթի մի մասը, վրացիների ինքնավարությունն ամփոփվելու էր Քութայիսի, Թիֆլիսի նահանգներով, Բաթումի մարզով և Տրապիզոնի վիլայեթի մի մասով, իսկ Դաղստանը, Կովկասի լեռնային շրջանները՝ մինչև Վլադիկավկազ, Բաքուն և Գանձակի նահանգի մնացած մասը տրվելու էր կովկասյան թուրք–թաթարներին:

Ակնհայտ է, որ թուրքական կողմի ներկայացրած ծրագիրը ծուղակ էր, այն նպատակ ուներ Կովկասը զավթելու համար օգտագործել հայերի ռազմական ուժը: Սակայն հայ քաղաքական գործիչներից ոչ ոք վստահ չէր Թուրքիայի հաղթանակի, առավել ևս՝ նրա կողմից «վեհանձնորեն» տրվող ինքնավարության իրական լինելու մեջ: Այդ պատճառով էլ Կարինում երիտթուրք պատվիրակները մերժողական պատասխան ստացան:

Մի քանի օր տևած անարդյունք բանակցություններից հետո նրանք մեկնեցին Վան, Մուշ, որտեղ նույնպես մերժում ստացան տեղի հայկական մարմինների կողմից:

Կ. Պոլսում Դաշնակցության ղեկավար ուժերը փորձ արեցին հակազդելու օսմանյան կառավարության պատերազմական տրամադրությունների վրա: Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը օսմանյան խորհրդարանի անդամ Գարեգին Փաստրմաջյանին (Արմեն Գարո) հասկացրել էր, որ «դժգոհ է Դաշնակցության կրավորական դիրքից»:

Այսպիսով՝ օսմանյան կառավարության փորձերը ռուս–թուրքական պատերազմի նախօրեին հայերին ներգրավելու Կովկասում նախապատրաստվող հակառուսական ապստամբության մեջ՝ ձախողվեցին, իսկ հայերի բռնած «չեզոքության» դիրքորոշումը մեկնաբանվեց իբրև «Օսմանյան կայսրության շահերին դավաճանություն»:

Հ.Յ.Դ. ութերորդ ընդհանուր ժողովի օրակարգի հարցերը դեռ չէին սպառվել, երբ լուր ստացվեց, որ սկսվել է ընդհանուր պատերազմը:

ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվեց 1914 թ. օգոստոսի 1–ին (հին տոմարով՝ հուլիսի 19–ին): Միմյանց դեմ արյունալի պայքար էին մղում խոշոր տերությունների երկու հակադիր խմբավորումները, որոնցում վճռորոշ դեր էին խաղում մի կողմից՝ Գերմանիան և Ավստրո–Հունգարիան, իսկ մյուս կողմից՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը: Պատերազմը մղվում էր երկրագնդի վրա գերիշխանության նոր ոլորտների հաստատման կամ հների փոփոխման, գաղութների վերաբաժանման կամ պահպանման նպատակով: Քողարկելով սեփական զավթողական ծրագրերը՝ խոշոր տերություններից յուրաքանչյուրը հայտարարում էր, թե կռվում է փոքր ազգերի և ժողովուրդների իրավունքների, հակառակորդի բռնակալ լծից նրանց ազատագրելու համար. որպես օրինակ բերում էին սերբ, բելգիացի, լեհ, հայ, հրեա և այլ ժողովուրդներին:

Օսմանյան կայսրությունը միաժամանակ հետաձգեց իր մուտքը համաշխարհային կռվի թատերաբեմ: Նախորդ տարիներին սկսված ռազմական նախապատրաստությունները հնարավորինս ավարտուն տեսքի հասցնելու նպատակով թուրքական կառավարությունը երեք ամիս շարունակ վարեց առերևույթ չեզոքության քաղաքականություն:

Երիտթուրք կառավարիչները, պետական մակարդակի վրա դնելով պանթյուրքիզմի հետադիմական, մարդատյաց և ոճրագործ գաղափարախոսությունը, վերջին ճշգրտումներն էին կատարում իրենց ծավալապաշտական ծրագրում: Պատերազմը պատեհ առիթ էր Ռուսաստանի և Բալկանյան երկրների հետ ունեցած իրենց դարավոր «հաշիվները մաքրելու» համար: Նրանք մտադիր էին ռուսների դեմ հանել ցարական կայսրությունում բնակվող թուրքալեզու, ինչպես նաև՝ մահմեդական մյուս ժողովուրդներին՝

օգտագործելով իրենց ցեղակից և կրոնակից ժողովուրդների ապստամբական ուժը՝ միավորել նրանց Թուրքիայի գլխավորությամբ ստեղծվելիք «Մեծ Թուրանի» մեջ:

Այդ կայսրության ստեղծման ճանապարհին լուրջ խոչընդոտ էին հայերն ու նրանց Հայրենիքը: Անհերքելի է այն փաստը, որ Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելու հիմնական պատճառներից էր հայկական խոչընդոտի կամ սեպի վերացմանն ուղղված պանթյուրքական պլանը: Հայաստանի հայազրկման հրեշավոր քայլով երիտթուրքերը հույս ունեին մեկընդմիշտ փակելու Հայկական հարցը:

Ահա թե ինչու Թուրքիայի ռազմատենչ ծրագիրն ուղղված էր գլխավորապես դեպի Ռուսաստանը՝ հայկական տարածքների վրայով: Դա էր պատճառը, որ Կովկասյան ճակատը դարձավ Ռուսաստանի և Թուրքիայի միջև սանձազերծված հերթական կռվի գլխավոր, վճռական տեղամասը:

Օսմանյան ամբողջ բանակի տեղաբաշխման պատկերը ռուս–թուրքական հերթական բախման նախօրեին նույնպես վկայում է այն մասին, որ թուրքական բարձրագույն հրամանատարությունը Կովկասյան ճակատը դիտում էր իր համար ամենակարևորը Առաջին համաշխարհային պատերազմում: Այսպես՝ ռազմական նախարար Էնվերը Կովկասի և Իրանի ուղղությամբ կենտրոնացրեց թուրքական 3–րդ բանակը, որը բաղկացած էր երեք բանակային կորպուսներից: Երրորդ բանակի գլխավոր շտաբը էրզրումում էր, զինվորների ընդհանուր քանակը հասնում էր 300 հազար մարդու, որից՝ առաջին գծի վրա 190 հազար կռվող, դրանց գումարած՝ 15–20 հազար քուրդ հեծյալներ:

Կայսերական Գերմանիային հաջողվեց պատերազմի մեջ ներքաշել Թուրքիային՝ որպես իրեն դաշնակից երկիր: Գերմանիան խոստացավ ամեն կարգի աջակցություն ցուցաբերել Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի դեմ թուրքական բանակի մղվելիք ռազմական գործողությունների ժամանակ: Գերմանա–թուրքական համագործակցությունն ամրապնդվեց 1914 թ. օգոստոսի 2–ին Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքված գաղտնի ռազմական դաշինքով:

Գերմանական բարձրագույն հրամանատարության անմիջական նպատակն էր թուրքական ռազմական ուժի միջոցով կաշկանդել հակառակորդ խմբավորման (Անտանտ) զորքերի մի մասը և դրանով հեշտացնել իր բանակների վիճակը եվրոպական ճակատներում:

Ինչ վերաբերում է ցարական Ռուսաստանին, ապա նա այս անգամ ևս մեծ ակնկալիքներ ուներ պատերազմից: Ռուսական ռազմաքաղաքական վերնախավը ձգտում էր տեր դառնալու սևծովյան նեղուցներին և Կ. Պոլսին, ազատորեն դուրս գալու դեպի Միջերկրական ծով: Իսկ Մերձավոր Արևելքում ցարիզմի նպատակն էր նվաճել Արևմտյան Հայաստանը, ամրապնդել իր դիրքերն Իրանում, ինչը հնարավորություն կտար հաստատվելու այս շահութաբեր տարածաշրջանում:

1914 թ. հոկտեմբերի վերջերին գերմանական երկու ռազմանավերը թուրքական նավերի հետ միասին անսպասելիորեն հարձակումներ գործե-

ցին սևծովյան ռուսական ռազմակայանների և նավահանգիստների վրա: Նման իրավիճակում Ռուսաստանը դիմեց պատասխան կտրուկ քայլերի: Հոկտեմբերի 21–ին ցար Նիկոլայ II–ը պաշտոնապես պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը:

Ուշագրավ է այն իրողությունը, որ ռուսական գերագույն շտաբը 1910–1914 թվականներին՝ պատերազմական պլանների մշակման ժամանակ, օսմանյան պետությանը լուրջ հակառակորդի տեղ չէր դնում, այլ գլխավորապես զբաղված էր Գերմանիայի և Ավստրո–Հունգարիայի դեմ ռազմական ծրագրերի մշակմամբ ու դրանց ճշգրտմամբ: Ռուսական բարձրագույն հրամանատարությունը նախատեսել էր Կովկասյան ճակատում պաշտպանողական մարտեր վարել, նույնիսկ չէր բացառվում ռազմական անհաջողությունը սկզբնական փուլում: Այդ դեպքում ռուսական կովկասյան զորքը պետք է նահանջեր մինչև Ռազմավիրական ճանապարհը և Բաքու՝ գլխավոր առաջադրանք ունենալով փակելու թուրքական զորքի հնարավոր մուտքը Հյուսիսային Կովկաս: Իսկ դա նշանակում էր ժամանակավորապես թշնամուն հանձնել Անդրկովկասը: Ռուսական գերագույն շտաբը պլանավորել էր վճռական հարվածը հասցնել Գերմանիային ու Ավստրո–Հունգարիային, իր դաշնակիցների հետ միասին ջախջախել նրանց, որից հետո Օսմանյան կայսրության ապագան, ինքնըստինքյան, կանխորոշված կլիներ:

Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով–Դաշկով

Սակայն աշխարհամարտը խառնեց թշնամական ուժերի ռազմաքաղաքական պլանները. ոչ ոք չէր նախատեսել, որ պատերազմն այդքան երկարատև կլինի, իսկ հաղթանակները և պարտությունները այդքան վիթխարի կորուստներ կբերեն: Ահա թե ինչու հընթացս վերանայվում էին աշխարհամարտի տարբեր ճակատների ռազմավարական և մարտավարական խնդիրները:

Ցարական զինվորական բարձրագույն իշխանությունները գրեթե համոզված էին այն բանում, որ Թուրքիան 1915 թ. գարնանից շուտ չի համար-

ձակվի պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ: Կովկասյան ճակատն ուժեղացնելու փոխարեն, պատերազմի նախնական պլանի համաձայն, գերագույն շտաբը շարունակաբար Կովկասի ռազմական օկրուգից զորամասեր էր տեղափոխում դեպի ռուսական Արևմտյան ճակատ: Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով–Դաշկովը խիստ անհանգստացած էր երկրամասի պաշտպանական ուժերը թուլացնելու այդպիսի անխոհեմ քաղաքականությունից: Նա բավականաչափ իրազեկված էր թուրքական ռազմական նախապատրաստությունների, սահմանամերձ վայրերում թշնամու խոշոր զորախմբերի կենտրոնացման մասին: Ռուսական հետախուզական և դիվանագիտական բազմաթիվ տեղեկատվությունները վկայում էին, որ Կովկասյան ճակատում պատերազմն սկսվելու է կանխատեսված ժամկետից շատ ավելի վաղ:

Վտանգավոր կացությունը ստիպում էր Վորոնցով–Դաշկովին լրջորեն զբաղվել իրեն վստահված երկրամասի սահմանների պաշտպանության ամրապնդման խնդրով: Կովկասի ռազմական օկրուգում հայտարարվեց ռազմական դրություն, սկսվեց կովկասյան բանակի շուտափույթ կազմավորումը: Կովկասի փոխարքա, հետևազորի գեներալ Ի. Վորոնցով–Դաշկովը նշանակվեց նորաստեղծ կովկասյան բանակի գլխավոր հրամանատար:

Ռուս–թուրքական պատերազմի սկսվելու պահին կովկասյան բանակը զորակոչերից եկող համալրումների և այլ օկրուգներից ժամանող զորամասերի շնորհիվ զգալիորեն ամրապնդվեց: 1914 թ. նոյեմբերի 25–ի դրությամբ Կովկասյան օկրուգում և ճակատում եղած ռուսական զորքերի ընդհանուր թվաքանակը կազմում էր մոտ 183 հազար մարդ, որից ճակատային առաջին գծում կռվում էր մոտ 127 հազար զինվոր:

1914 թ. աշնան վերջերին արդեն ռուս–թուրքական կռվի ճակատային գիծը, սկիզբ առնելով Բաթումի մոտից, հասնում էր մինչև Ուրմիա լճից արևելք ընկած վայրերը՝ կազմելով 720 կմ:

Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատի սկզբնական փուլի ամենանշանավոր իրադարձությունը 1914 թ. դեկտեմբերի 9–ից մինչև 1915 թ. հունվարի 5–ը տեղի ունեցած Սարիղամիշի ճակատամարտն էր:

Թուրքական 3–րդ բանակը, որի հրամանատարությունն անձամբ ստանձնել էր Էնվեր փաշան, կարճ ժամանակահատվածում կարողացավ գրավել Օլթին, Արդվինը և Արդահանը, ընդհուպ մոտենալ Բաթումին ու դուրս գալ ռուսական զորքերի թիկունքը՝ Կարս–Սարիղամիշի շրջանում:

Դեպքերի ընթացքը, սակայն, շուտով փոխվեց հօգուտ կովկասյան բանակի: Ռուս զինվորների ու հայ կամավորների հերոսական ջանքերի շնորհիվ օսմանյան 90–հազարանոց բանակը գլխովին ջախջախվեց: Հազիվ պրծնելով գերի ընկնելուց՝ Էնվերը ճողոպրեց դեպի Էրզրում, այնտեղից էլ՝ Կ. Պոլիս, իսկ թուրքական IX կորպուսի հրամանատար Իսհան փաշան մոտ 200 սպաների հետ գերի ընկավ ռուսներին: Մոտավորապես 12 000 հոգի՝ օսմանյան զորքի մնացորդները միայն հասան Էրզրում, մնացած 78 հազարը սպանվեց, ցրտահարվեց կամ գերի ընկավ Սարիղամիշի ճակատամարտում:

Էնվերը (ձախից չորրորդը՝ փափախով) գերմանացիների հետ Կոնիայի կայարանում՝ Կովկասյան ճակատից դեպի Կ. Պոլիս փախուստի ճանապարհին

Թվական մեծ գերակշռություն ունեցող օսմանյան բանակի ջախջախումն ի դերև հանեց թուրքերի ռազմական ծրագիրը՝ գրավել Անդրկովկասը, ապա ներխուժել Հյուսիսային Կովկաս և Իրան:

1915 թ. հունվար–փետրվարին ռուս–թուրքական ճակատում հարաբերական հանգստի վիճակ էր տիրում: Օգտվելով այդ հնարավորությունից՝ Կովկասի ռուսական զորքերի գլխավոր հրամանատարությունը ձեռնամուխ եղավ բանակի շարքերի համալրման, նոր զորամասերի կազմավորման և թիկունքի հուսալիությունն ամրապնդելուն ուղղված միջոցառումների իրագործմանը: Սակայն այս ժամանակաշրջանում նույնպես ռուսական բարձրագույն հրամանատարությունը շարունակեց զորքերի մի մասի տեղափոխումը Կովկասյան ճակատից ռուսական Արևմտյան ճակատ, ինչը, բնականաբար սահմանափակում էր կովկասյան ռուսական բանակի ռազմական հնարավորությունները Թուրքիայի դեմ մղվող պատերազմում:

Ռուսական գերագույն շտաբը 1915 թ. գարնանը կովկասյան բանակի հրամանատարությանն առաջադրանք էր տվել պահելու ճակատի աջ և ձախ թևերը (Բաթում, Ատրպատական), միաժամանակ՝ գլխավոր հարվածը հասցնելու Վանի ուղղությամբ:

Թուրքական զինվորական ղեկավարությունը կարողացավ վերականգնել իր 3–րդ բանակը, չնայած որ օսմանյան զորքերի մեծ մասը կենտրոնացված էր Գալիպոլիի ճակատում՝ մայրաքաղաք Կ. Պոլսից ոչ շատ հեռու: Այստեղ 1915 թ. ապրիլից սկսվել էր անգլո–ֆրանսիական զորքերի Դարդանելյան գործողությունը: Կովկասյան ճակատում կռվող թուրքական երրորդ բանակի մարտական ուժն այդ ժամանակ կազմում էր 70 հազար մարդ՝ առանց քրդական ջոկատների:

Ռուսական կովկասյան բանակը 1915 թ. գարնանն ու ամռանը վերագրավեց Թավրիզը, Ուրմիայի շրջանը, գրավեց Վանը: Շարժվելով Վանա լճի հարավային և արևմտյան ափերով՝ ռուսական զորամասերը, նրանց հետ միասին նաև հայկական կամավորական միացյալ զորամիավորը՝ Արարատյան գունդը, չկարողացան ազատագրել Մուշն ու Բիթլիսը, թեև գտնվում էին 20–30 կմ հեռավորության վրա նշված հայկական քաղաքներից:

Անսպասելի կերպով Վանի զորախումբը 1915 թ. հուլիսի կեսերին նահանջեց Արևմտյան Հայաստանում գրաված տարածքներից դեպի ռուսական կայսրության պետական սահմանները: Ճիշտ է, այդ նահանջը կարճատև եղավ. ուժերի վերադասավորման և բանակային պահուստային ուժերը մարտադաշտ հանելով՝ ռուսական զորքը հուլիսի վերջին–օգոստոսի սկզբին վերանվաճեց նախկինում գրաված դիրքերը Վանի նահանգում և Բայազետ–Մանազկերտի շրջանում:

Իսկ Բիթլիսի, Խնուսի, Մուշի և Սասունի հայության ճնշող մեծամասնությունը, մնալով օգնության սպասող, զոհ գնաց թուրք բարբարոսներին…

Կովկասի փոխարքայության ռազմավարչական կազմը 1915 թ. ամռան վերջին փոխվեց: Արևմտյան ճակատում գերմանական զորքերից կրած մի շարք ծանր պարտություններից հետո ցարը ռուսական բանակի գերագույն զորահրամանատարի պաշտոնից ազատեց մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին և անձամբ ստանձնեց այդ պաշտոնը: Ցարի հրամանով Նիկոլայ Նիկոլաևիչը 1915 թ. օգոստոսին նշանակվեց Կովկասի փոխարքա և, միաժամանակ, կովկասյան բանակի գլխավոր հրամանատար: «Նորընծա» փոխարքան իր նշանակումից ուղիղ մեկ ամիս անց ժամանեց Թիֆլիս:

Թարմ համալրումների միջոցով ամրապնդվելով՝ կովկասյան բանակն առաջին անգամ ռազմաբեմի բոլոր հատվածներում 1915 թ. աշնանը շոշափելի առավելություն ստացավ թշնամու ուժերի նկատմամբ: Նոյեմբերի կեսի տվյալներով Կովկասյան ճակատում գործող ռուսական զորքերում կար մոտ 196 հազար մարտիկ:

Ռուսական գերագույն շտաբը կովկասյան հրամանատարության հետ միասին որոշել էր օսմանյան բանակի արևելյան գլխավոր հենակետի և ռազմական ամրոցի՝ Էրզրումի գրավումն իրականացնել 1916 թ. գարնանը: Սակայն իր դաշնակիցներին օգնելու նպատակով ռուսական կողմը ժամկետից շուտ սկսեց այդ կարևորագույն ռազմական նպատակի իրականացումը: Մեծ դեր խաղաց նաև փոխարքա Ն. Ռոմանովի անձնական շահագրգռվածությունն այդ գործում. նա ձգտում էր որևէ խոշոր հաղթանակի շնորհիվ վերականգնելու իր անձնական խարխլված հեղինակությունն ու զինվորական վարկը:

Ռուսական կովկասյան զորքերը, ձմռան դաժան սառնամանիքի պայմաններում դիմելով վճռական գրոհների, 1916 թ. փետրվարի 3–ին գրավեցին Էրզրում բերդաքաղաքը: Իր նշանակությամբ և հետևանքներով Էրզրումի գրավումը Կովկասյան ճակատի պատմության ամենախոշոր ռազմաքաղաքական իրադարձությունն էր: Առանձին կովկասյան բանակի շտաբը 1916 թ. փետրվարին Կարսից տեղափոխվեց Էրզրում, որը դարձավ Թուրքիայից գրավված մարզերի ռազմավարչական կենտրոնը:


ՍԵՒԱՆԱՑ ԼԻՄ
ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ
ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՈՒՐՄԻՈՅ ԼԻՄ
ՎԱՆԱՅ ԼԻՄ
ԱՐԱՐԱՏ
ԱՐԱՍ գ.
ԵՐԵՒԱՆ
ԳՅՈՒՄՐԻ
ԱԼԱՇԿԵՐՏ
ՄՈՒՇ
ՎԱՆ
ԲԱՅԱԶԵՏ
ԱՐՏԱՀԱՆ
ԱՐԴԱՀԱՆ
ԽՈՐԱՍԱՆԻ ԿԻՐՃ
ԲԱՍԵՆ
ՍԱՍՈՒՆ
ՄՈՒՇ
ՏԱՊԱՐԴԻՆ գ.
ԵՐԶՆԿԱ
ԲԱԲԵՐԴ
ԲԻԹԼԻՍ
ՏՐԱՊԻԶՈՆ
ՄԱՄԱԽԱԹՈՒՆ
ԽՆՈՒՍ
ՕԹԻ
ԷՐԷՂ
ԹՈՐՈՍԱՆ
ԳԱՌՆԻ
ԱՐԱՐԱՏԻ գ.
ԱՐԱՍԻ գ.
ԵՓՐԱՏԻ գ.
ՏԻԳՐԻՍ գ.
ԱՐԱՔՍԻ գ.
ԱՐԱՔՍԻ, ԵՓՐԱՏԻ գ.
ԱՐԱՔՍԻ գ.
ԱՐԱՔՍԻ գ.
ԱՐԱՔՍ

Անգլիան և Ֆրանսիան, անհանգստացած Կովկասյան ճակատում ռուսների նվաճումներից, փորձում էին կանխել Ռուսաստանի հնարավոր միայնակ մուտքը Կ. Պոլիս և նեղուցների գոտի: Դրա վառ ապացույցն էր Դարդանելի օպերացիան, որն անհաջող ավարտ ունեցավ: Դրանից հետո անգլո–ֆրանսիական ուժերը ծրագրեցին նույն բանն անել նաև Միջագետքի ուղղության վրա: Մի քանի ամիս տևած անգլո–ֆրանսիական գաղտնի բանակցություններն ավարտվեցին Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ մի համաձայնության ստորագրմամբ, որը միջազգային դիվանագիտության պատմության մեջ հայտնի է «Սայքս—Պիկոյի համաձայնագիր» անունով:

Անտանտի երեք գլխավոր տերությունները հաստատեցին Օսմանյան կայսրության տարածքների բաժանման հետևյալ պատկերը. Ռուսաստանին էին անցնելու նեղուցները՝ Կ. Պոլսով և Արևմտյան Հայաստանի մեծագույն մասը: Դրա դիմաց Ռուսաստանը չէր առարկում Կիլիկիայի, Փոքր Հայքի և արաբական տարածքների անգլո–ֆրանսիական բաժանմանը:

Ռազմաճակատի հայկական հատվածում ռուսական բանակը 1916 թ. ամռան վերջերին փաստորեն դուրս էր եկել իր դաշնակիցների հետ որոշված տարածքային նվաճումների սահմանաբաժան գծի վրա: Շատ քիչ փոփոխություններով ռուսական կովկասյան բանակը մնաց այդ դիրքերում մինչև 1917 թ. վերջը:

ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Առաջին աշխարհամարտի հսկայական պահանջները, նորանոր զորամասերի ստեղծման հրատապ, ռազմականորեն խիստ անհրաժեշտ խնդիրը հարկադրում էին պատերազմող տերությունների կառավարություններին և, մասնավորապես, ռուսական վարչակարգին, վերանայելու իրենց զինված ուժերի համալրման քաղաքականությունը: Ռուսաստանի ցարը 1914 թ. օգոստոսի 5–ի հրովարտակով թույլատրեց ռուսական բանակի շարքերը համալրել նաև կամավորներով. դա վերաբերում էր առաջին հերթին մերձճակատային ազգային երկրամասերի բնակչությանը:

Ռուսական գերագույն շտաբի գաղտնի ցուցումի համաձայն՝ ցարական բանակում ոչ ռուս զինվորների (բացի՝ ռուս, ուկրաինացի, բելառուս զինվորների) քանակը չպետք է գերազանցեր խաղաղ ժամանակվա անձնակազմի 1/5–ը, իսկ պատերազմական ժամանակաշրջանում՝ 1/3–ը: Մինչև համաշխարհային պատերազմը զինծառայության չէին կանչվում ղազախները, ուզբեկները, թուրքմենները, ղրղզները, Հյուսիսային Կովկասի լեռնականները, կովկասյան թաթարները, կայսրության հյուսիսային տարածքներում ապրող փոքրաքանակ ժողովուրդները: Սահմանափակ էր լատիշների, լիտվացիների, թաթարների, բաշկիրների, վրացիների, հայերի և այլոց մուտքը զինված ուժեր: Ոչ ռուս զինակոչիկներին, որպես կանոն, ուղարկում

էին ծառայելու հայրենի բնակավայրերից շատ հեռու գտնվող ռազմական օկրուգներում:

Պատերազմի հենց առաջին ամիսներից ռուսական Արևմտյան ճակատում սկսեցին ձևավորվել կամավորական խմբեր և ջոկատներ լեհերից, լատիշներից, էստոնացիներից: Կամավորական խմբերին հատկացված էր օժանդակ դեր, նրանք կանոնավոր բանակի զորամասեր չէին համարվում:

Ի տարբերություն ռուսական Արևմտյան ճակատի, Կովկասում նախքան ռուս–թուրքական պատերազմի սկսվելն արդեն ծավալվել էր կամավորական շարժում՝ տարածվելով հայերի, ասորիների, վրացիների, հույների և մահմեդական միջավայրում: Երկրամասում առաջինը կազմավորվեցին հայկական և ասորական կամավորական խմբերը:

Հայ կամավորական զինուժը մի քանի վերակազմավորումներից հետո՝ 1915 թ. վերջին, ներկայացնում էին 8 դրուժինաներ, որոնցից 7–ը գործող բանակում էր և 1–ը՝ պահեստում, միասին՝ մոտ 10 000 կամավոր մարտիկներ:

Վրացի ազնվականության ներկայացուցիչները կազմեցին երկու դրուժինա, որոնց կից կային նաև հեծյալ հարյուրյակներ:

Ռուս–թուրքական պատերազմի նախօրեին ստեղծվեցին ասորական կամավորների 11 հեծյալ խմբեր, որոնցից երկուսը կազմված էին Օսմանյան կայսրությունից փախած ասորիներից: Ուրմիայի շրջանում տեղակայվեցին այդ խմբերից ինը՝ առաջադրանք ունենալով պաշտպանելու այդտեղ ապրող բազմաքանակ ասորի բնակչությանը թուրքական զորամասերի հարձակումներից: Մարտական գործողությունների ծավալմանը զուգընթաց ասորական խմբերն օգտագործվում էին նաև որպես հետախուզական ու կռվող ուժ: 1914 թ. դեկտեմբերին ասորի կամավորների թիվը հասնում էր 1300 մարդու:

Կովկասի մահմեդականներից կազմավորվեց այսպես կոչված Կովկասյան բնիկ հեծելազորային դիվիզիան, հետագայում՝ հայտնի «վայրենի» դիվիզիան: Այդ զորամիավորումը բաղկացած էր երեք բրիգադներից: Բացի այդ՝ ձևավորվեց աջարական հետևակային գումարտակը նույն «վայրենի» դիվիզիայի կազմում: Դիվիզիան դուրս բերվեց Կովկասի սահմաններից և մինչև 1917 թ. վերջերը կռվում էր ռուսական Արևմտյան ճակատում:

Չնայած այս փաստին՝ Կովկասի մահմեդականների մեծ մասը համակրանք էր տածում դեպի Թուրքիան, իսկ երկրամասի աջարները, լազերը և թուրքերը 1914 թ. վերջին ապստամբություն բարձրացրին ռուսական բանակի թիկունքում՝ Կարսի և Բաթումի մարզերում, սակայն նրանց հակառուսական ելույթը համատարած բնույթ չընդունեց և շուտով ճնշվեց:

Բաթումի և Կարսի մարզերի հույներից 1914 թ. նոյեմբերին կազմվեց 250 կամավորներից բաղկացած մի ջոկատ:

Այսպիսով՝ բանակի համալրման գլխավոր միջոցի՝ զորահավաքի կողքին կամավորական շարժումը դարձավ ռուսական կովկասյան զորքի ամրապնդման լրացուցիչ աղբյուր:

Ռազմաքաղաքական դեպքերի զարգացման և Կովկասյան ճակատում ռուսների ունեցած հաջողությունների պայմաններում 1915 թ. վերջերից

փոխվեց ռուսական բարձրագույն հրամանատարության վերաբերմունքը կամավորական շարժման հանդեպ: Փոխարքա Ն. Ռոմանովի ջանքերով ամրապնդված կովկասյան բանակը հնարավորություն ստացավ Թուրքիայի դեմ լայնածավալ ու միաժամանակ տարբեր ուղղություններով հարձակման դիմելու: Հետևանքը եղավ այն, որ ցարական բարձրագույն հրամանատարությունը կամավորական քիչ թե շատ ինքնուրույնություն ունեցող զորամիավորների կարիքն այլևս չէր զգում: Աստիճանական ընթացքով կամավորական ջոկատները լուծարվեցին, և նրանց հենքի վրա ստեղծվեցին ազգային կանոնավոր զորամասեր ռուսական կովկասյան բանակի կազմում:

Հայկական 8 դրուժինաների հիմքի վրա ձևավորվեցին կանոնավոր բանակի վեց հրածգային գումարտակներ: Այդ վերափոխությունը տեղի ունեցավ 1916 թ. գարնան և ամռան ընթացքում (դրա մասին ավելի մանրամասն տե՛ս վերջում):

Վերակազմավորման ենթարկվեցին նաև վրացական և ասորական կամավորական խմբերը:

Կովկասյան ճակատում ստեղծվել էր նաև պարսիկներից կազմված ազգային զորամաս՝ ռուսական հրամանատարության ենթակայության ներքո: Այդ զորամիավորը կոչվեց պարսիկների կազակային բրիգադ:

Հայ կամավորների անցումը Ջանգվի կամրջով, Երևան, 1914

Ինքնին հատկանշական է այն փաստը, որ ցարական բանակի կազմում ստեղծվեցին ազգային կանոնավոր զորամասեր:

Ռուսական ինքնակալության այդ քաղաքականությունը, բացի զուտ ռազմականից, ուներ նաև բարոյահոգեբանական նշանակություն՝ հայրենասիրական պոռթկումներ արթնացնել կայսրության հպատակների մեջ: Քիչ կարևոր դեր չխաղաց նաև այն հանգամանքը, որ իր ազգային–կադրային քաղաքականությամբ ռուսական միապետական վարչակարգը ազգային երկրամասերի հեղափոխական և ազատագրական պայքարի ռազմական ներուժը այդ տեղերից դուրս էր հանում և ուղարկում պատերազմի դաշտ: Դրա ամենավառ օրինակը Կովկասն էր:

Երբ որևէ ռազմաճակատում խախտվում էր բանակի ազգային կազմի սահմանված համամասնությունը, ռուսական բարձրագույն ռազմական իշխանությունը ազգային զինծառայողների «ավելցուկները» փոխադրում էր և ցրում մյուս ռազմաճակատների վրա: Այսպես՝ 1914 թ. օգոստոս–հոկտեմբերին հայ զորակոչիկները կազմում էին Կովկասի ռազմական օկրուգի զորքերի 40–50 տոկոսը, և 2–րդ ու 3–րդ կովկասյան կորպուսներն այդպիսի կազմով էլ ուղարկվեցին ռուսական Արևմտյան ճակատ:

Ցարական ամբողջ բանակում, այդ թվում նաև Կովկասյան ճակատում ծառայող հայ զինվորականների թվաքանակի վերաբերյալ հանդիպում են տարբեր տվյալներ: Ընդ որում՝ ռուսական բանակում ծառայող հայերի ընդհանուր թիվը 150 հազարից հասցվում է մինչև 300 հազարի: Սակայն հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ պատերազմի տարիներին ռուսական ամբողջ բանակի քանակակազմը աստիճանական ընթացքով էր ավելացել:

Համադրելով արխիվային, այն ժամանակվա մամուլում և պատմագիտական գրականության մեջ հանդիպող տվյալները՝ մեզ հաջողվեց պարզել, որ ցարական բանակում չէր կարող 1915 թվականի սկզբներին մոտ 150 հազար կամ էլ 1916 թ. վերջին 200–250 հազար հայ զինծառայող լինել: Դա չի համապատասխանում իրականությանը:

Որոշ հեղինակներ, թերագնահատելով հայ կամավորական շարժման դերը, փաստարկում են, թե ցարական բանակում ծառայում էր 200–250 հազար ռուսահպատակ հայ զինվորական, էլ ի՞նչ կարիք կար առանձին, զուտ հայկական զորամիավորներ ստեղծելու, որոնց ռազմական արժեքն, իբր, շատ աննշան էր:

Որպես հակափաստարկ պետք է նշել, որ 1915 թ. գարնան վերջի տվյալներով՝ ցարական բանակում ծառայող և զորակոչված հայերի ընդհանուր թիվը կազմում էր 120 000, որից 40 000–ը տվյալ պահին գտնվում էր Կովկասում (գործող բանակում և օկրուգային զորքերում): Սակայն Կովկասում եղած հայ զինվորների մեծագույն մասը օկրուգային զորքերի կազմում էր և մշտապես իրականացվող տեղափոխումներից հետո հայտնվում էր ռուսական Արևմտյան ճակատի տարբեր բանակներում:

Իսկ Կովկասյան ճակատում 1915 թ. գարնան վերջին եղած 40 հազար հայ զինվորականներից մոտ 8 հազարն էր գտնվում ռուս–թուրքական ճակատում կռվող ռուսական զորքերում: Այդ պահի դրությամբ միայն հայ կա-

մավորական դրուժինաներում կար 7000 կամավոր: Նկատի ունենալով, որ ռուսական կովկասյան բանակն այդ ժամանակ ուներ մոտ 100 հազար կռվող, ապա ակնհայտ է, որ ռուս–թուրքական պատերազմի այդ փուլում հայ կամավորների մարտական ուժն այդքան էլ «աննշան» չէր:

Հաճախ է օգտագործվում մի այսպիսի փաստարկ ևս՝ Ռուսաստանում բնակվող 2 միլիոն 54 հազար հայերի մոտ 13 տոկոսը մտել է ռուսական բանակի շարքերը: Սակայն դա վերաբերում է պատերազմի ոչ թե առաջին երկու տարվան, այլ ամբողջ պատերազմաշրջանին (1914, 1915, 1916, 1917 թվականներ):

Համադրելով մեր ձեռքի տակ եղած արխիվային և այլ կարգի տվյալները՝ հաջողվեց ճշգրտել 1917 թ. սկզբի դրությամբ ռուսական բանակում եղած հայ զինվորների քանակը:

Անդրկովկասում բնակվող 1,8 մլն ռուսահպատակ հայերից 2,5 տարում (1914 թ. օգոստոսի 1–1917 թ. հունվարի 1) ցարական բանակ էր զորակոչվել 147 344 մարդ, որից իսկական զինծառայության համար պիտանի էր ճանաչվել 121 921 հոգի: Դա կազմում էր երկրամասից զորահավաքի ենթարկված հայերի մոտ 83%–ը, մի ցուցանիշ, որը համապատասխանում է համառուսաստանյան զորահավաքի միջին ցուցանիշին, ըստ որի՝ բանակ զորակոչվածների ընդհանուր թվի 80–85 տոկոսն էր ընդգրկվում շարային զինծառայության մեջ: Մնացած 15–20 տոկոս զորակոչիկների մեծ մասը մտնում էր ծառայության բանակի զինվորական ու քաղաքացիական զանազան ստորաբաժանումների մեջ՝ որպես ոչ շարային զինվորական կամ քաղաքացիական ծառայող:

1917 թ. սկզբի տվյալներով՝ ցարական ամբողջ բանակում ծառայության մեջ էր գտնվում 125 000 հայ մարտիկ: Նրանցից 40 հազարը գտնվում էր կովկասյան բանակում (գործող կորպուսներ, օկրուգային զորքեր), որից՝ 16–18 հազարը՝ ճակատային առաջավոր դիրքերում: Մոտ 60 հազար հայ զինվորներ գտնվում էին ռուսական Արևմտյան ճակատում, իսկ մնացած 25 հազարը՝ կայսրության տարբեր ռազմական օկրուգներում: Հավելենք նաև, որ ռուսական բանակում ծառայող հայ զինվորների առավելագույն քանակությունը, պատերազմական որևէ ժամանակապահի դրությամբ, առկա վիճակով երբեք չի գերազանցել 150–160 հազարը:

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Նախապատրաստվելով միմյանց դեմ պատերազմի՝ Ռուսաստանը և Օսմանյան կայսրությունը կարևոր նշանակություն էին տալիս հայերին իրենց կողմը ներգրավելու խնդրի լուծմանը: Դարավոր թշնամիների ռազմական պլանների մշակման ու ճշգրտման գործում հայության դիրքորոշումը էական դեր կարող էր խաղալ, քանզի Արևմտյան Հայաստանի տարածքը դառնալու էր ռուս–թուրքական հերթական ընդհարման գլխավոր ռազմաբեմը:

Հայության ղեկավար մարմինների առջև այն օրերին ծառացել էին դժվարին ու ծանր հարցեր՝ ինչպիսի՞ դիրքորոշում բռնել, ի՞նչ գործելակերպի հետևել, որպեսզի հայության երկու խոշոր հատվածները, առաջին հերթին արևմտահայերը, քիչ կորուստներով դուրս գան պատերազմական թոհուբոհից:

Արդեն ասվել է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցության ութերորդ ընդհանուր ժողովի կայացրած որոշման համաձայն՝ սպասվող ռուս–թուրքական պատերազմում հայերը պետք է չեզոք դիրք բռնեին. որպես իրենց երկրների հպատակներ՝ և՛ արևելահայերը, և՛ արևմտահայերը պետք է կատարեին իրենց զինվորական պարտականությունը: Իսկ օսմանյան կառավարության փորձերը՝ ռուս–թուրքական պատերազմի նախօրյակին հայերին Կովկասում նախապատրաստվող հակառուսական ապստամբության մեջ ներգրավելու համար, չհաջողվեցին:

Պատմական այդ բարդ և սրընթաց փոփոխվող պայմաններում դժվար էր գտնել ճիշտ ելքը. պատմական հեռավորությունից նույնիսկ դժվար է պնդել, թե կար նման ելք:

Բնականաբար, նման բարդ իրավիճակում Դաշնակցության մարմիններն ու գործիչները միասնական տեսակետ չունեին կամավորական շարժման հարցում: Կուսակցության արևմտահայ մարմինների ու գործիչների մի մասը՝ Հայաստանի բյուրոն, Գ. Խաժակը, Ա. Գարոն և ուրիշներ, կողմնակից էին նրան, որ Հ.Յ.Դ.–ն գաղտնի նախապատրաստվի ինքնապաշտպանության ու զինված պայքարի, իսկ վտանգի պահին միանա հայ կամավորական խմբերին:

Այդ նույն ժամանակ Դաշնակցության արևմտահայ շրջաններում կային մի շարք գործիչներ՝ Ա. Մանուկյանը, Ա. Վռամյանը, Վարդգեսը, Վ. Փափազյանը, Հ. Շահրիկյանը և ուրիշներ, ովքեր վնասակար էին համարում կամավորական խմբերի ստեղծումը, առավել ևս նրանց գործուն մասնակցությունը պատերազմին: Վահան Փափազյանը վկայում է, որ Հ.Յ.Դ. արևմտյան մարմինները միակամ էին, որ «Թիւրքիոյ հայութիւնը պարկեշտօրեն պէտք է կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնները և յանձն առնէ պահանջուած զոհողութիւնները (զինուորագրութիւն, արտակարգ հարկեր և այլն)»: Իսկ Արամ Մանուկյանը կորստաբեր էր համարում կամավորական շարժումը, ինչը, նրա կարծիքով, օգտագործվելու էր իթթիհատական կառավարության կողմից իր հակահայ քաղաքականությունն արդարացնելու համար:

Սակայն ճշմարտությունն այն է, որ հայերի ցանկացած կողմնորոշում չէր փրկելու արևմտահայությանը մեծ աղետից, որովհետև երիտթուրք կառավարողները, առաջնորդվելով ծայրահեղ հետադիմական գաղափարներով, նախօրոք՝ պատերազմից մի քանի տարի առաջ, արդեն ծրագրել էին հայերի ցեղասպանությունը: Ահա թե ինչու ամենևին էլ նշանակություն չուներ այն հանգամանքը, թե ինչպես իրենց կպահեին հայերը՝ օրինապահ, չեզոք, ռուսամետ, թե թուրքամետ, կամավորական խմբեր կստեղծեին, թե ոչ: Հայության վերաբերյալ երիտթուրքերի ցեղասպանական որոշումը վաղօրոք կայացված էր, մնում էր ճշգրտել ժամանակապահը…

Ռուսական բանակի հայ և ռուս հետախույզները

Ցարական Ռուսաստանը նույնպես մեծ դեր էր հատկացնում հայ ժողովրդի, մասնավորապես արևմտահայերի դիրքորոշմանը, քանի որ, կախված այն բանից, թե ում կողմում նա հանդես կգար, կարող էր վճռորոշ լինել պատերազմի ելքը Կովկասյան ճակատում այս կամ այն կողմի օգտին լուծելու գործում:

Երբ սկսվեց աշխարհամարտը, հայ ժողովուրդն իր մեծամասնությամբ, կարծես ներքին մղումով հիմնականում քաղաքականապես կողմնորոշվեց դեպի Ռուսաստանը, ինչը խրախուսվում էր նաև ռուսական իշխանությունների կողմից:

Ռուսական ռազմաքաղաքական կառավարող շրջանակները ձգտում էին օգտագործել Արևմտյան Հայաստանում ապրող հայերի, ինչպես նաև ասորիների ու քրդական որոշ ցեղերի ուժերը: Ռուսական կողմն այդ ուղղությամբ աշխատանքներ էր սկսել տանել դեռ 1914 թ. օգոստոսից:

Կովկասյան զորքերի դաշտային վարչության հետախուզական բաժնի պետն իր զեկուցագրերից մեկում (1914 թ. օգոստոսի 16–ով թվագրված) հիմնավորում է արևմտահայերին զենք մատակարարելու անհրաժեշտությունը: Հայերին համարելով Ռուսաստանին հավատարիմ ժողովուրդ՝ նա առաջարկում է կովկասյան ռուսական իշխանություններին անհապաղ օգնել նրանց: «Թուրքերի պատկերացումը հայերի մասին՝ որպես մի տարրի, որը խանգարում է թուրքերին իրագործելու մեկ ամբողջության մեջ թուրք–թաթարների միաձուլման իրենց երազանքը, նպաստեց այն բանին, որ Թուրքիայի սահմանադրական ոչ մի կառավարություն չվերացրեց «Հայերին ոչնչացնելու» համիդյան կարգախոսը,— գրում է ռուսական հետախույզը:— Նույն այդ կարգախոսն ընդունել է նաև Գերմանիան, որն ուժգնորեն խրախուսում է թուրքերին այդ գործում, քանի որ նրան ձեռնտու է Ռուսաստանի հարավում համատարած թուրք–թաթարական պատնեշի ստեղծումը… Թուրքիան ճնշելու և բռնանալու է հայերի հանդեպ և՛ հաղթանակի, և՛ պարտության դեպքում… Բալկանյան պատերազմի ժամանակվա և դրա-

նից հետո եղած փորձն ապացուցել է նման գործելաձևի ողջ գործնականությունն ու անպատժելիությունը»:

Զեկուցագրի հեղինակը գտնում էր, որ հայերի նկատմամբ բռնությունները լիովին բացառելն անհնար է, բայց շատ իրական է ինքնապաշտպանության կազմակերպման միջոցով հայերի կորուստները փոքրագույնի հասցնելը: Իսկ դրա համար նրանց պետք է զինել. «Փորձը ցույց է տալիս, որ մահմեդականների և քրդերի ավազակախմբերը լուրջ ասպատակությունների չեն դիմում կամ նույնիսկ չեն էլ հարձակվում պաշտպանվող հայ գյուղացիների վրա, եթե վերջիններս բավարար չափով զենք ունեն»:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը 1914 թ. օգոստոսի 26–ին Վորոնցով–Դաշկովին խորհուրդ է տալիս նախկին զգուշավորության փոխարեն առանց հապաղելու դիմել գործնական քայլերի: Նա գտնում էր, որ կարելի է արդեն ընտրել հուսալի մարդկանց, որոնց կհանձնարարվի, երբ դրա կարիքն զգացվի, հայ, ասորի և քուրդ ժողովուրդներից ջոկատների կազմակերպումն ու ղեկավարումը, միաժամանակ անհրաժեշտ է համարում Կովկասում և Պարսկաստանում գտնվող ռուսական զորամասերին կից հարկավոր քանակությամբ սպառազինություն նախապատրաստել:

Շատ չանցած Կովկասի ռուսական իշխանությունը դիմեց կոնկրետ քայլերի՝ հայերի վերաբերմունքը Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմի պարագայում պարզելու նպատակով: Փոխարքան բանակցությունների հրավիրեց Հայոց ազգային բյուրոյի ներկայացուցիչներին:

Հայոց ազգային բյուրոն կազմակերպվել էր դեռ 1912 թ. վերջերին Թիֆլիսում և կոչված էր օգնելու Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Հայկական հարցի շուրջը դիվանագիտական բանակցություններ վարելու մեծ տերությունների հետ: Եվրոպայում գործում էր Հայոց ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ, իսկ Ազգային բյուրոյի անունից Պետրոգրադի հետ կապերը վարում էր բժիշկ Հակոբ Զավրյանը: Աստիճանաբար Ազգային բյուրոն դարձավ արևելահայության ազգային կյանքի ղեկավար կենտրոնը:

Սհա այսպիսի իրադրությունում Հ.Յ.Դ. Արևելյան բյուրոն և Հայոց ազգային բյուրոն սկսեցին ձեռնարկել կամավորական շարժումը:

Տեղի ունեցած մի քանի հանդիպումների արդյունքում, որ ընթացան փոխարքայի և Մեսրոպ եպիսկոպոսի (Ազգային բյուրոյի պատվավոր նախագահ), Սամսոն Հարությունյանի (բյուրոյի նախագահ), Ալեքսանդր Խատիսյանի, Հակոբ Զավրյանի միջև, պարզվեց երկու կողմերի տրամադրությունները: Վորոնցով–Դաշկովը հայ ներկայացուցիչներին ասաց. «Ես միշտ համոզված էի, որ հայերը շատ լավ ըմբռնում են Ռուսաստանի դերը իրենց բախտի տնօրինման մեջ… Ես կարծում եմ, թե լավագույնը, ինչը որ արևմտահայերը կարող են ստանալ մեր հաղթանակից հետո, Լիբանանի սահմանադրության նման մի բանն է: Այդպես էլ ես գրել եմ ցարին»:

Հայոց ազգային բյուրոյի նիստերից մեկի ժամանակ Հ. Զավրյանը հայտնեց, որ համաշխարհային կռվի առաջին իսկ օրերին փոխարքան Մես-

ռոպ եպիսկոպոսի միջոցով փոխանցել էր ցարի բաղձանքը, որ հայերը լեհերի նման կամավորական խմբեր կազմեն: Ի հատուցումն դրա՝ ցարը հաղթանակի դեպքում խոստանում էր արևմտահայ հողերի վրա հաստատել ինքնավար Հայաստան՝ Ռուսաստանի հովանու ներքո:


Պողոս Նուբար


Հակոբ Զավրյան


Գևորգ Ե կաթողիկոս

Հայ կամավորական շարժման քաղաքական նպատակն էր ռուսական զորքի օգնությամբ իրականացնել «հայկական վեց վիլայեթների ու նրանց անբաժանելի մաս կազմող Կիլիկիայի» ինքնավարության հաստատումը՝ Ռուսաստանի հովանու տակ: Այսպես՝ 1914 թ. օգոստոսի 5–ին գրած իր նամակում Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ն, Կովկասի փոխարքային հիշեցնելով պատերազմի նախօրյակին Հայկական հարցի շուրջը եղած քաղաքական ու դիվանագիտական պայքարի արդյունքների մասին, նշում էր, որ սկսված «մեծ պատերազմը նորից թուրքահայերի ճակատագիրը և բարենորոգումների ճակատագիրը ենթարկում է մեծ փորձությունների»: Քիչ ավելի ուշ՝ նոյեմբերի 8–ին գրված մեկ այլ դիմում–նամակով կաթողիկոսը Վորոնցով–Դաշկովին է ներկայացնում հայերի հետևյալ ցանկությունը. ցարի կողմից պաշտոնապես մի գրություն հղվի արևմտահայերին այն մասին, թե եկել է նրանց հարցի վերջնական լուծման պահը, և թե հայերին մեկ միասնական տարածքում՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքիրի, Խարբերդի վիլայեթներում և նրանց անբաժանելի մասը կազմող Կիլիկիայով հանդերձ, Ռուսաստանի կողմից շնորհվում է ինքնավարություն: Դրանով «կավարտվի Թուրքիայի դարավոր լծի տակ տառապող քրիստոնյա ժողովուրդներին ազատագրելու» Ռուսաստանի «պատմական առաքելությունը»:

Փոխարքան խոստացավ ընթացք տալ Հայոց ազգային բյուրոյի և կաթողիկոսի առաջարկներին ու դրանք փոխանցել Պետրոգրադ, իսկ հայկական կողմը հայտնեց իր պատրաստակամությունը՝ բոլոր միջոցներով, այդ թվում և կամավորական խմբերով աջակցել ռուսական զենքի հաջողությանը սպասվող ռուս–թուրքական պատերազմում:

Հայ կամավորական շարժման կազմակերպչական աշխատանքները գլխավորեց Ազգային բյուրոն, որը երեք ներկայացուցիչներ նշանակեց՝ Մեսրոպ եպիսկոպոսին, Ս. Հարությունյանին և Ա. Խատիսյանին, փոխարքայի հետ կամավորական շարժմանը առնչվող բոլոր խնդիրների շուրջը բանակցելու համար: Կովկասյան ռազմական իշխանությունների հետ հարաբերությունները վարում էր Ա. Խատիսյանը:

Փոխարքան խոստացավ օգնել հայ ներկայացուցիչներին որպեսզի բանտերում, աքսորում կամ արտասահմանում ու փախուստի մեջ գտնվող դաշնակցականներին թույլատրվի վերադառնալ Կովկաս:

Սակայն մինչև ցարի կողմից նման իրավունք տալը ազգային–ազատագրական և հեղափոխական շարժումների հարյուրավոր մասնակիցներ ու ղեկավարներ կիսալեգալ գտնվում էին Կովկասում: Աստիճանաբար Թիֆլիսում կենտրոնացան հայդուկային պայքարի քաջարի հրամանատարներն ու մարտիկները:

Վառնայում գտնվող Անդրանիկը 1914 թ. օգոստոսի 2–ին մեկնեց Օդեսա, ապա՝ Յալթա–Տուապսե–Փոթի, որտեղից երկաթուղով, տասնօրյա ուղևորությունից հետո հասավ Թիֆլիս՝ իջևանելով Վ. Ահարոնյանի տանը: Համազասպ Սրվանձտյանցը, որը 1913 թ. փախել էր Սիբիրի աքսորավայրից, Հ.Յ.Դ. Ը. ընդհանուր ժողովին մասնակցելուց հետո ժամանել էր Կովկասի փոխարքայության մայրաքաղաք: Թեհրանից եկավ Քեռին (Արշակ Գաֆֆյան), Կ. Պոլսից՝ Արմեն Գարոն, ժամանել էր նաև Դրոն (Դրաստամատ Կանայան), Խարկովից՝ Սեպուհը (Արշակ Ներսիսյան), որն այդտեղ էր ապրում Համբարձում Շիլյան կեղծանվամբ 1912 թ.՝ Հ.Յ.Դ. հայտնի դատավարությունից հետո, եկավ իշխան Հովսեփ Արղությանը: Քիչ ավելի ուշ՝ 1914 թ. նոյեմբերին, Քիշնևից ընտանիքով Կովկաս եկավ նաև Խանասորի Վարդանը (Սարգիս Մեհրաբյան):

Այդ օրերին կովկասահայության մեջ տիրում էր ընդհանուր ոգևորություն: Ռուս–թուրքական հերթական պատերազմի հետ հայերը որոշակիորեն կապում էին Արևմտյան Հայաստանի ազատագրության գործը: Կովկասի հայաշատ քաղաքներում տեղի էին ունենում բազմահազարանոց հավաքներ, ցույցեր, երիտասարդությունը պահանջում էր ակտիվորեն մասնակցել պատերազմին, ստեղծել կամավորական ջոկատներ: Գրեթե ոչ ոք կասկած չուներ ռուսական բանակի արագ հաղթանակի հարցում. նախորդ ռուս–թուրքական պատերազմների փորձը դրա հուսալի վկայությունն էր:

Գերիշխում էր այն տեսակետը, որ մի քանի ամսում կովկասյան ռուսական զորքը կգրավի Վանը, Էրզրումը, Բիթլիսը, և արևմտահայերը կազատագրվեն թուրքական դարավոր ճնշումից: «Ինչի՞ս են պետք կոշիկ ու մուշտակ,— ասում էր Անդրանիկը,— զինվորին կուտամ չարուխ ու հալվա և հինգ օրէն Վան եմ»:

Դեպքերից մի քանի տարի անց Ա. Խատիսյանը գրում է. «Այս մտայնությունը այնքան հզոր և տիրական էր, որ համակեց նույնիսկ չեզոքության կողմնակիցներին»:

Ալեքսանդր Խատիսյան



Անդրանիկ Օզանյան

Նրա վկայությամբ ռուսական զինվորական իշխանությունները «անհամբեր կ'ուզեին տեսնել Անդրանիկը», երբ վերջինս ժամանեց Թիֆլիս: 1914 թ. օգոստոսի վերջին տեղի ունեցած առաջին հանդիպմանը մասնակցում էին գեներալներ Միշլաևսկին և Յուդենիչը, Անդրանիկը և Խատիսյանը: Երեք ժամ տևած զրույցի ընթացքում կողմերը շատ հարցեր պարզեցին, գլխավորապես՝ ռազմական բնույթի:

1914 թ. սեպտեմբերի սկզբին՝ կովկասյան բանակի շտաբի և Հայոց ազգային բյուրոյի համատեղ խորհրդակցության ժամանակ, որոշվեց հայ կամավորական խմբերի թիվը, յուրաքանչյուր խմբի քանակակազմը, Ազգային բյուրոյի ու ռուսական շտաբի պարտավորությունների շրջանակը: Համաձայնություն կայացվեց, որ «առայժմ» ձևավորվեն չորս կամավորական խմբեր, որոնց կազմակերպչական հարցերով զբաղվելու էին Ազգային բյուրոյի կողմից ընտրված գործադիր, զինվորական և ֆինանսական մարմինները:

1914 թ. սեպտեմբերի 21–23–ը տեղի ունեցավ Հ.Յ.Դ. կովկասյան կազմակերպությունների շրջանային ժողովը: Կտրված լինելով Հայաստանի բյուրոյի մեծամասնությունից և Երկրում գործող մարմիններից՝ ժողովը կամավորական շարժման հարցում ի վերջո հաստատում է Արևելյան բյուրոյի որոշումները, և տեղի դաշնակցական մարմինները գլխավորում են հայ կամավորական շարժումը:

Հայ կամավորական խմբերի անմիջական կազմավորման ու կովկասյան բանակի շտաբի հետ նրանց հարաբերությունների կարգավորման գործով զբաղվում էր Հայոց ազգային բյուրոյի գործադիր (կարգադրիչ) մարմինը, որը բաղկացած էր բացառապես դաշնակցականներից՝ իշխան Հ. Արղության (գործադիր մարմնի ղեկավար), Հ. Ջավրյան, Նիկոլ Աղբալյան, Արմեն Գարո, Աբրահամ Գյուլխանդանյան, Սիմոն Վրացյան, իսկ 1915 թ. նրա կազմի մեջ մտավ նաև Ռոստոմը (Ստեփան Զորյան):

Մինչև գործադիր մարմնի ձևավորումը Ազգային բյուրոն Թիֆլիս հրավիրեց Ռուսաստանի խոշոր քաղաքներից և հայաշատ վայրերից ներկայա-

ցուցիչների, որոնք «մասնավոր խորհրդակցության ժամանակ միաձայն հավանություն տվեցին դրուժինաների կազմակերպման որոշված գործին, խոստացան իրենց բարոյական և նյութական աջակցությունը»:

Պետական գանձարանի հաշվին պահվող հայ կամավորների քանակությունն ըստ խմբերի սահմանվեց հետևյալ չափերով՝ առաջին ջոկատի համար՝ 1200 հոգի, մնացածների համար՝ 400–ական: Հիշյալ քանակության մեջ մտնող յուրաքանչյուր հայ կամավոր, սեպտեմբերի 10–ից սկսած, ռուսական գանձարանից ստանալու էր 10 ռուբլի ամսական ռոճիկ: Այդ նպատակով համապատասխան ռուսական զորամիավորումների պետերը 5000–ական ռուբլի կանխավճար ստացան:

Այդ նորմայից ավելի ջոկատներում ընդգրկվող կամավորների բոլոր ծախսերը պետք է հոգար Հայոց ազգային բյուրոն: Վերջինիս կյանքի կոչած ֆինանսական մարմինը Ռուսաստանի, Եվրոպայի, ԱՄՆ–ի հայաշատ վայրերում կազմակերպվող հանգանակությունների և նվիրատվությունների հաշվին կարգավորում էր այդ խնդիրը:

Հայկական ջոկատների կամ խմբերի անջատ–անջատ ձևավորումը, տարբեր վայրերում նրանց տեղաբաշխումը թելադրված էին ռուսական իշխանությունների կողմից, որոնք նման պայմաններում ավելի հեշտությամբ կվերահսկեին հայերի ինքնուրույն զինական ուժը Կովկասյան ճակատի վրա: Կամավորական խմբերը գործելու էին թուրքական զորքերի հաղորդակցման ճանապարհների շրջաններում: Պատերազմի ժամանակ նրանք պետք է աջակցեին ռուսական զորամասերին, հետախուզական և առաջապահ զորամիավորների առաջադրանքներ կատարեին: Քաջածանոթ լինելով Արևմտյան Հայաստանի տեղանքին, տիրապետելով թուրքերենին և քրդերենին՝ հայ կամավորները կարող էին շոշափելի ծառայություններ մատուցել ռուսական զորքին: Նրանց խնդիրն էր նաև՝ աջակցել արևմտահայերի ինքնապաշտպանության գործին, զերծ պահել հայկական բնակավայրերը ավերածություններից և կոտորածից:

Հովսեփ Արղության

Սեպուհ

Սմբատ

Կամավորական խմբերի շարքերը համալրում էին արտասահմանյան հայերը և պետական զորահավաքից այս կամ այն պատճառով ազատված ռուսահպատակ այն հայերը, որոնք կամավոր ցանկություն էին հայտնում մտնելու խմբերի մեջ:

Հայրենասիրական բուռն վերելքի պայմաններում ծավալված հայ կամավորական, ժողովրդական շարժումն աստիճանաբար մտավ կազմակերպված հունի մեջ:

1914 թ. հոկտեմբերի վերջին հայ կամավորական չորս ջոկատներն արդեն հիմնականում ձևավորված էին:

Առաջին ջոկատը գտնվում էր Սալմաստում: Հրամանատարն էր Անդրանիկը (Օզանյան), նրա օգնականները՝ Սեպուհը և Սմբատը (Բորոյան, Մախլուտո): Սեպուհն անձամբ հրաժարվեց IV ջոկատի հրամանատարությունից այն պատճառաբանությամբ, թե ինքը երբեք 10–20 մարդուց ավելի կազմ ունեցող խումբ չի ղեկավարել, ու դժվար կլինի իր համար: Առաջին ջոկատի քաղաքական մասը և ռուսական հրամանատարության հետ կապերը վարում էր Հ. Զավրյանը:

Երկրորդ ջոկատը կազմավորվեց Իգդիրում, հրամանատարն էր Դրոն, օգնականը՝ Խեչոն, շտաբի կառավարիչը՝ Արմեն Գարոն, քաղաքական մասի վարիչը՝ Ս. Տիգրանյանը:

Համազասպի հրամանատարությամբ երրորդ ջոկատը ստեղծվեց Կաղզվանում, նրա օգնականն էր Վ. Վալադյանը:

Սարիղամիշում ձևավորվեց չորրորդ ջոկատը՝ Քեռու գլխավորությամբ, նրա օգնականն էր Մ. Արզումանյանը: III և IV ջոկատների քաղաքական մասի վարիչն էր Ն. Աղբալյանը:

Անդրանիկի ջոկատը կազմավորվեց Իրանի հյուսիսային տարածքում, ուր մինչև ռուս–թուրքական ճակատում պատերազմական գործողությունների սկսվելը ցարական կառավարությունը զորքեր էր մտցրել՝ Իրանի չեզոքության վրա հսկելու, նրան գերմանա–թուրքական ազդեցությունից զերծ պահելու նպատակով:

Վալադ Վալադյան



Դրո

Հայ կամավորական չորս ջոկատներում 1914 թ. հոկտեմբերի վերջին կար 2482 մարտիկ. առաջինում՝ 1200, երկրորդում՝ 382, երրորդում՝ 430, չորրորդում՝ 470: Բացի այդ՝ 600 կամավոր մարտիկ էլ գտնվում էր պահեստում՝ Ալեքսանդրապոլում և Իգդիրում, այսինքն՝ կամավորների ընդհանուր թիվն էր 3082 մարդ:

Առաջինը դեպի ռազմի դաշտ շարժվեց Անդրանիկի խումբը 1914 թ. հոկտեմբերի 23–ին, հաջորդ օրը մեկնեց Դրոյի խումբը, իսկ նոյեմբերի սկզբին՝ Համազասպի և Քեռու խմբերը: Հայ կամավորները կռվի առաջին իսկ օրերից խիզախորեն և անձնուրացաբար էին մարտնչում օսմանյան զորքի դեմ՝ աչքի ընկնելով իրենց տոկունությամբ ու քաջագործություններով:

Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների ծավալմանը զուգընթաց կռվող ուժի պակասություն ունեցող ռուսական զորքի հրամանատարությունը շահագրգռվածություն հանդես բերեց հայ կամավոր զինուժի քանակն ավելացնելու գործում, մի բան, որը լիովին համընկնում էր Հայոց ազգային բյուրոյի նույնանման ձգտման հետ: Հայ կամավորական ջոկատների անձնակազմի մեծացման անհրաժեշտությունը հատկապես սուր զգացվեց 1914 թ. դեկտեմբերին, երբ օսմանյան բանակը ժամանակավոր հաջողություններ ունեցավ Սարիղամիշի և Օլթի–Արդահանի շրջաններում:

Մինչ այդ Կովկասի փոխարքայության կյանքում տեղի էր ունեցել մի արտասովոր իրադարձություն:

1914 թ. նոյեմբերի 26–ին Թիֆլիս ժամանեց Նիկոլայ II–ը: Խաղաղ ժամանակներում անգամ ռուսական ցարերը հազվադեպ էին այցի արժանացնում իրենց կովկասահպատակ ժողովուրդներին, իսկ այժմ, պատերազմական պայմաններում, ցարը եկել էր Կովկաս՝ ոգևորելու իր հպատակներին թշնամու դեմ մղվող պայքարում:

Չորս օր Թիֆլիսում մնալուց հետո նա մեկնեց ճակատ, այցելեց Կարսում գտնվող ռուսական գործող բանակի շտաբ, ապա եղավ Սարիղամիշի ճակատային առաջավոր դիրքերում: Իր ներկայությամբ նա հայրենասիրության «նոր ալիք» բարձրացրեց կռվող զինվորների և բանակի հրամկազմի շրջանում: Սակայն թուրքական զորամասերի առաջխաղացումը Սարիղամիշի ուղղությամբ հարկադրեց ռուսական կայսրին շտապ թողնել ճակատը, վերադառնալ Թիֆլիս, ապա՝ հապճեպորեն մեկնել Պետրոգրադ:

Փոխարքայության նստավայրում գտնվելու օրերին ռուսական ցարն ընդունելություններ կատարեց հայերի, վրացիների և մահմեդականների ներկայացուցիչների հետ: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ն նոյեմբերի 29–ին Նիկոլայ II–ի հետ կայացած հանդիպումից հետո հայ հասարակայնությանը հաղորդեց, թե ցարն իրեն հավաստիացրել է. «Ձեր բոլոր բաղձանքները կկատարվեն… Հայերին պայծառ ապագա է սպասվում, և որ ինքը հավատում է, որ Հայաստանը հետագայում չի հետևի Բուլղարիայի օրինակին» (Ռուսաստանի ռազմաքաղաքական օգնությամբ վերականգնելով իր անկախությունը՝ Բուլղարիան այնուհետև գերմանամետ գիծ բռնեց, իսկ աշխարհամարտի ժամանակ միացավ Եռյակ դաշինքին — Ա. Ն.):

Ռուսաստանի կայսրը Թիֆլիսի քաղաքապետ Ա. Խատիսյանի ուղեկցությամբ այցելեց նաև քաղաքային հիվանդանոց: Քաղաքապետը կայսրին

տարավ այն հիվանդասենյակը, ուր պառկած էր Բայազետի կռիվներում վիրավորված Դրոն:

Այցի մասնակից գեներալ Յուդենիչը փայլուն գնահատական է տալիս հայ հրամանատարին, որից հետո ցարը, շրջվելով դեպի Դրոն, հարցնում է. «Դուք որտե՞ղ եք ստացել Ձեր զինվորական կրթությունը»: Հետևում է պատասխանը. «Հեղափոխական գործի մեջ, Ձե՛րդ մեծություն»: Նման պատասխանից ցարն այլայլվեց մի պահ (*հեղափոխություն* բառը միշտ էլ նրան սարսափեցնում էր — Ա. Ն.), սակայն Դրոն կարողացավ շտկել դրությունը՝ «մեր հեղափոխական գործը կատարվում էր Թուրքիայում»: Ռուսական ինքնակալը հանդարտվեց, ապա հայ ռազմիկի «շապկի վրա կպցրեց Գեորգիևյան խաչը»:

Կովկասահայերի համար ցարի այցը մեծ ոգևորության տեղիք տվեց. հայ հասարակական–քաղաքական ուժերը, գրեթե ամբողջ հայ հասարակայնությունը համոզված էին, որ կովկասյան բանակի օգնությամբ շատ շուտով կլուծվի արևմտահայ եղբայրների ազատագրության հարցը…

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՃԱՎԱԼՈՒՄԸ

Հաշվի առնելով հազարավոր հայ կամավորների պատրաստակամությունը և 1914 թ. վերջերին ճակատում առաջացած վտանգավոր իրադրությունը՝ կովկասյան բանակի հրամանատարությունը որոշեց կրկնապատկել հայկական զինուժը: Գեներալ Յուդենիչը դիմեց Վորոնցով–Դաշկովին՝ ստանալու նրա թույլտվությունը, որպեսզի «հայկական դրուժինաներն ուժեղացվեն երեք հազար (3000) մարդով»: Նման կարգադրություն շուտով եղավ կովկասյան զորքերի գլխավոր հրամանատարի կողմից:

Այդ առումով հատկանշական է IV կովկասյան կորպուսի հրամանատար Օգանովսկու դիրքորոշումը: Կովկասյան ռուսական բանակի գլխավոր շտաբ ուղարկած իր գաղտնի հեռագրում (1914 թ. դեկտեմբերի 10) նա մեծ գովեստով է խոսում հայկական խմբերի մասին, հատկապես առանձնացնելով Անդրանիկին: Գեներալ Օգանովսկին առաջարկում է մոտակա ամիսներին լրջորեն զբաղվել նոր հայկական խմբերի ստեղծման խնդրով՝ նշելով, որ ճիշտ կազմակերպման ու գործնական նախապատրաստման դեպքում այդ խմբերի նշանակությունը ռազմական տեսակետից անտեսելն անհնար է. դրանք հակակշռող ուժ են ռուսական զորքի մերձճակատային թիկունքում ու նաև Թուրքիայում եղած քրդերի դեմ: Ոչ պակաս կարևոր է այդ խնդրի քաղաքական կողմը. «1. Հայերին թուրքերից բարիք չի սպասվում, հայերի ճակատագիրը սերտորեն կապված է Ռուսաստանի ճակատագրի հետ, նրանք դա խորապես գիտակցում են: 2. Զգուշանալ հայերի դավաճանությունից. դա պատերազմի ժամանակ խիստ անհրաժեշտ է: Իսկ մտահոգվելով պատերազմից հետո նրանց վարքագծի առնչությամբ՝ հարկավոր է խուսափել թիկունքում մնացած հայերին զինելուց, և, ընդհակառակը, զինել բոլոր զենք կրելու ընդունակ մարդկանց, խմբերի ձևով նրանց Թուրքիա ու-

ղարկել՝ այն հաշվով, որպեսզի (նրանց — Ա. Ն.) արդեն զինված վիճակով դեպի հետ՝ Կովկաս, չթողնեն... Եթե ներկա պահին հայերի տրամադրությունն ու միջոցները բավարար չափով չօգտագործվեն, հետագայում չենք խուսափի լուրջ կշտամբանքից»:


Հովհաննես Թումանյան

Վարդան

Հայկ Բժշկյան

Հարկ է նշել, որ Սարիղամիշի օպերացիայի դժվարին օրերին ռուսական հրամանատարությունը, Ազգային բյուրոյի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն, զենք բաժանեց մերձճակատային գոտու հայ բնակչությանը, որպեսզի ռուսական զորքի նահանջի դեպքում նրանք կարողանան պաշտպանվել և կռվել թուրքական կանոնավոր ուժերի դեմ:

Գաղտնի գրագրությունների մեջ այդպիսին էր Օգանովսկու կարծիքը: Սակայն Հայոց ազգային բյուրոյի անդամներին նա մեկ այլ բան էր ասում:

Հայոց ազգային բյուրոյի նախագահ Մեսրոպ եպիսկոպոսը, Երևանի փոխթեմական Խորեն եպիսկոպոսը և մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, 1914 թ. դեկտեմբերին այցելելով Ալաշկերտի հովիտը, այնտեղ հանդիպում են ունենում նույն Օգանովսկու հետ: Զրույցի ժամանակ վերջինս խորհուրդ է տալիս հայ կամավորների թիվը հասցնել 10–12 հազարի՝ միաժամանակ ասելով, թե Հայաստանին պատերազմից հետո էլ հարկավոր է իր բանակն ունենալ պաշտպանության նպատակով:

Հայ ներկայացուցիչները, Թիֆլիս վերադառնալով, այդ մասին տեղյակ են պահում Ազգային բյուրոյին, որը հավանության է արժանացնում հայ կամավոր զինուժի ավելացման գաղափարը: Ազգային բյուրոն որոշում է հայ կամավորների թիվը հասցնել 10 հազար մարդու: 1914 թ. վերջի — 1915 թ. առաջին կեսի համար դա շոշափելի մարտական ուժ կարող էր լինել՝ կազմելով կովկասյան կռվող զորքի 10 տոկոսը:

Այդ նույն ժամանակ կամավորական շարժումը չդադարող հոսքով համալրվում էր, Կովկաս ժամանած կամավորագրյալների թիվը եղած պահանջվածից էլ բավական մեծ էր: Գալիս էին Օդեսայից, Ղրիմից, Ռոստովից, Եկատերինոդարից, Աստրախանից, Թուրքեստանից, Սիբիրից, նաև Ռումինիայից, Բուլղարիայից և ԱՄՆ–ից:

Հայ կամավորները Նյու Յորքում՝ Կովկաս մեկնելուն պատրաստ

1915 թ. հունվարի վերջին Ալեքսանդրապոլից և Իգդիրից հայ կամավորական ուժերի ռեզերվը տեղափոխվեց Քանաքեռ, որտեղ նրանց տրամադրվեցին տեղի զորանոցները: Պահեստային խմբի հրամանատարը 1914 թ. դեկտեմբերից Խանասորի Վարդանն էր: Իգդիրում հիմնադրված սպայական դասընթացը (50 հոգու համար) նույնպես փոխադրվեց Քանաքեռ՝ աստիճանաբար ընդլայնելով իր կազմը: Սպայական դպրոցում դասերը վարում էին 4–րդ կորպուսի շտաբի սպաները՝ գնդապետ Զինկևիչը, փոխգնդապետ Օզոլը, Արշավիր Շահխաթունին և ուրիշներ: Սակայն դպրոցը կարճատև գործունեությունից հետո փակվեց:

Շարժման առաջին փուլում (1914 թ. սեպտեմբեր–1915 թ. հունվար) հայկական դրուժինաները մարտական մեծ կորուստներ ունեցան. 156 սպանված և 743 վիրավոր, որը կազմում էր կռվողների քանակության 36%–ից ավելին:

Կամավորական շարժման Գործադիր մարմինը ստեղծել էր Զինվորական խորհուրդ կամ շտաբ, որը զբաղված էր խմբերի մարտական խնդիրների լուծմամբ: Նա որոշում էր խմբերի գործունեության վայրը, նրանց թիվը, հրամանատարական կազմը, նախատեսում զորաշարժի ծրագիրը:

Պահեստային խմբի առկայությունը մեծապես բարելավեց կռվող խմբերի համալրման գործը, նպաստեց շարժման ուժերի ավելացման, վարժեցման և պատրաստության մակարդակի բարձրացման հաջող ընթացքին: Արդյունքում ամրապնդվեց հայ կամավոր զինուժի մարտունակությունը:

Ռեզերվային ուժերի (1000–ից ավելի մարդ) հիման վրա սկսեց կազմավորվել V խումբը՝ Վարդանի գլխավորությամբ: Այն դեռ 1914 թ. դեկտեմբերից պատրաստ էր, բայց զենքի բացակայության պատճառով չէր կարողացել մասնակցել կռիվներին:

Կարսի մարզում 1914 թ. նոյեմբեր–դեկտեմբերին ստեղծվեցին երկու ոչ մեծաքանակ խմբեր, մեկը՝ սպա Գեղամյանի, մյուսը՝ հնչակյան Հարություն Գասպարյանի գլխավորությամբ: Շուտով նրանց շարքերը համալրեց Հայկ Բժշկյանի գլխավորած 85 կամավորներից բաղկացած խումբը, որը Թիֆլիս–Կարս երթուղով միացավ ճակատում կռվող հայ կամավորներին:

Վերը նշված այդ խմբերը մասնակցեցին Սարիղամիշի նշանավոր ճակատամարտին, սակայն կարճ ժամանակ անց անհաջող կազմակերպվածության և ֆինանսական դժվարությունների պատճառով քայքայվեցին ու ցրվեցին:

Կովկասյան բանակի շտաբը սպա Աղանիկ Ջանփոլադյանին հանձնարարեց կարգի բերել այդ խմբերը: Դրանց հիման վրա աստիճանաբար ձևավորեց նոր կամավորական խումբ՝ թվով վեցերորդը: Նորաստեղծ ջոկատի դրամական ապահովումը և կամավորների հավաքագրումն ստանձնեց Ս.Դ. Հնչակյան կուսակցությունը: Հնչակյանների կազմած 6–րդ խումբը 1915 թ. սկզբներին ուներ 500 մարտիկ:

Հայ կամավորական շարժման մեջ ընդգրկվել ցանկացողների քանակը 1915 թ. ձմռան ընթացքում շարունակաբար աճում էր: Համալրողների մեջ էին նաև ճակատային մերձակա վայրերի փախստական հայ բնակչության ներկայացուցիչները՝ Կարսի մարզից, Ալաշկերտի, Բայազետի հովիտներից և Ատրպատականից Արևելյան Հայաստանի տարբեր վայրերում ապաստանած մոտ 100 հազար հայերից բազմաթիվ երիտասարդներ: Նրանք պատրաստ էին մարտնչելու և արժանի հակահարված հասցնելու ցեղասպան թշնամուն:

Այդ նույն հայ գաղթականներին ապահով տեղ հասցրին հայ կամավորական խմբերը: Օրինակ՝ միայն Անդրանիկի, Դրոյի և Համազասպի ջոկատները, մոտ 50 հազար հայերի պաշտպանելով քուրդ և թուրք ավազակախմբերի հարձակումներից, ուղեկցեցին մինչև ռուսական պետական սահմանը:

Սարիղամիշի փայլուն հաղթանակից հետո հաստատված հարաբերական հանգստի ժամանակամիջոցում կովկասյան բանակի գլխավոր շտաբը զգալի ուշադրություն դարձրեց նաև հայկական զինուժի ամրապնդման խնդրին: Հայկական ջոկատները հանգստանալու և համալրվելու նպատակով ճակատային դիրքերից տեղափոխվեցին մոտակա թիկունք. Երևան–Իգդիրում էին II, III, IV խմբերը, Մարանդում՝ I խումբը:

Ցարական բանակի Գերագույն գլխավոր հրամանատարի 1915 թ. հունվարի 21–ի հ. 65 հրամանով հայկական կամավորական ջոկատները վերակազմավորվեցին նոր հաստիքի համաձայն՝ 1000–ական մարդ յուրաքանչյուրում, և պաշտոնապես սկսեցին կոչվել խումբ: Նախկին 4 ջոկատներին ավելացավ Վարդանի գլխավորած V խումբը, իսկ փետրվարի մեջ պաշտոնական գրանցում ստացավ նաև Ջանփոլադյանի VI խումբը, որի ձևավորումն ավարտվեց Կարսում:

Տեսարան հին Երևանից

Դրանով, փաստորեն, կովկասյան ու ռուսական բարձրագույն զինվորական իշխանություններն ընդունեցին հայ կամավոր զինուժի կարևոր դերն ու նշանակությունը Կովկասյան ճակատում: Այսպես սկսվեց հայ կամավորական շարժման երկրորդ փուլը՝ խմբերի և նրանց անձնակազմի քանակական աճի շրջանը:

1915 թ. փետրվարին Թիֆլիսում կիսալեգալ պայմաններում հրավիրվեց արևելահայերի «համազգային համագումարը»: Մասնակցում էին Հայոց ազգային բյուրոյի՝ Ռուսաստանի տարբեր վայրերի մասնաճյուղերի՝ այսպես կոչված հայկական կոմիտեների, բազմաթիվ հայ քաղաքական ուժերի և խավերի 120 ներկայացուցիչներ, այդ թվում՝ 8 կին և 8 հոգևորական:

Համահավաքին ներկա էին նաև կամավորական խմբերի Կարգադրիչ մարմնի անդամները և խմբապետները: Ազգային խորհրդակցությունը տևեց երեք օր՝ փետրվարի 16–18–ը, նիստերը տեղի էին ունենում Մեսրոպ եպիսկոպոսի տանը: Քննարկվեցին երեք կարևոր հարցեր՝ 1) Ազգային բյուրոյի հաշվետվությունը, 2) Ազգային բյուրոյի կազմի վերընտրություններ, 3) Հայաստանի ինքնավարության խնդիրը:

Վավերացվեց շարժման համար որոշված նախահաշիվը՝ տարեկան 2,5 մլն ռուբլի, որը պետք է գոյանար հանգանակությունների հաշվին: Հավաքի մասնակիցները բուռն ծափահարություններով լսեցին Զինվորական շտաբի գործունեության մասին հաշվետվությունը և միաձայն որոշեցին, որ հայ կամավոր զինուժի գոյությունն անհրաժեշտ է, խմբերի կազմավորումն ու պահպանումը պետք է շարունակել:

Հայաստանի ինքնավարության հարցը հատուկ քննարկման առարկա չդարձավ: Անդրանիկն իր ելույթում ասաց, որ ժողովի մասնակիցները «ռուսական կառավարությունից կտրուկ ձևով պահանջեն կատարելու Հայաստանի հարցում տված իր խոստումները»: Հավանություն տալով Ազգային

բյուրոյի դիվանագիտական քայլերին՝ համագումարն առաջարկեց «շարժվել նույն ընթացքով»:



Հին Թիֆլիս

Հայոց ազգային բյուրոն լեգալ գոյության իրավունք չուներ, բայց ցարական կառավարությունը չէր էլ արգելում նրա գործունեությունը: Համահավաքն ընտրեց Հայկական Կենտրոնական Ազգային բյուրոյի նոր կազմ՝ բաղկացած 15 անդամներից և 5 փոխանդամներից. պատվավոր նախագահ՝ Մեսրոպ եպիսկոպոս, առաջին փոխնախագահ՝ Ա. Խատիսյան, երկրորդ փոխնախագահ՝ Հ. Ամիրխանյան, անդամներ՝ Հ. Թումանյան, Հ. Սպենդիարյան, Ս. Հարությունյան, Խ. Աֆրիկյան, Կ. Ստեփանյան, Հ. Արղության, Ա. Սահակյան, Հ. Խունունց, Հ. Մելիքյան, Մ. Քալանթարյան, Ս. Գյուլբենկյան, Ա. Բաբախանյան (Լեո), փոխանդամներ՝ Ա. Պողոսյան, Գ. Խատիսյան, Ս. Լիսիցյան, Ա. Աբեղյան, Ա. Պապովյան, քարտուղար և պատասխանատու գանձապահ՝ Հ. Քոչարյան:

Ինչպես վկայում էր Թիֆլիսի քաղաքային ժանդարմական վարչության պետ Պաստրյուլինը փոխարքայի գրասենյակի հատուկ բաժնին հայկական համագումարի վերաբերյալ տված իր զեկուցագրում (1915 թ. փետրվարի 18–ով թվագրված), Հայոց ազգային բյուրոյի նոր կազմն «ավելի դաշնակցական էր, քան նախորդինը»:

Հայ կամավորների թվաքանակը 1915 թ. ձմռան վերջին հնարավոր չեղավ հասցնել 10 հազարի, այն կազմեց միայն 7000 մարտիկ, չնայած որ ցանկացողների քանակությունը դրանից 2–3 անգամ շատ էր: Զենքի և դրամի սղության պատճառով նախօրոք որոշված 10 հազար մարտակազմը չապահովվեց:

Նման պայմաններում Ազգային բյուրոն և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը դիմեցին իրենց տեղական մասնաճյուղերին ու կազմակերպություններին խնդրելով միաժամանակ դադարեցնել կամավորագրյալ-

ների առաքումը դեպի Կովկաս և առայժմ զբաղվել դրամական միջոցների հայթայթումով:

Կաթողիկոսը օրհնում է հայ կամավորներին:

Ազգային բյուրոն երկրամասի իշխանությունների հետ համաձայնություն կայացրեց, որպեսզի հայկական խմբերը կենտրոնացվեն Սալմաստի և Բայազետի ուղղությունների վրա՝ խիտ հայաբնակ վայրերին մոտ, որով «նրանց ռազմական ու քաղաքական նշանակությունը» ավելի կբարձրանար:

Կամավորական խմբերի Զինվորական շտաբը Թիֆլիսից տեղափոխվեց Երևան՝ ճակատին ավելի մոտ, դրանով աճեց շարժման անմիջական ղեկավարման արդյունավետությունը:

Ոգևորությունն ու լավատեսությունը համակել էին շարժման ղեկավարներին և մասնակիցներին, մեծ էր նրանց ձգտումը՝ օր առաջ մտնելու հայկական նահանգները և ռուսական զորամասերի հետ ազատելու արևմտահայերին սպառնացող մեծ աղետից: «Պատերազմը երևի ամառը կվերջանա,— գրում էր Ս. Վրացյանը 1915 թ. փետրվարի վերջին Հ.Յ.Դ. Ամերիկայի կոմիտեին ուղարկած նամակում,— և պատերազմից հետո կմեկնեմ Ամերիկա, ուր հավանաբար կլինեմ սեպտեմբերի մեջ... կմնամ մի քանի տարի, մինչև որ բոլոր ամերիկահայերին վերադարձնենք հայրենիք... Հույս կա, որ թե՛ Ռուսաստանը, թե՛ Անգլիան ու Ֆրանսիան ուժ կտան մեր պահանջներին, և մոտ ապագայում կստեղծվի ազատ Հայաստան: Համենայն դեպս, այդ հույսով ենք ապրում բոլորս և միայն դրա համար աշխատում»:

Դրոյի, Համազասպի և Քեռու խմբերը 1915 թ. ապրիլի սկզբին Քանաքեռում միավորվեցին 5–րդ խմբի հետ՝ կազմելով միացյալ հայկական զորամիավորում՝ Արարատյան գունդը՝ Վարդանի գլխավորությամբ: Գնդի հեծյալ մասի պետ նշանակվեց Խեչոն (Խաչատուր Ամիրյանց): Մարտակազմը բաղկացած էր 3300 կամավորներից:



Արարատյան գունդը Երևանից մեկնում է ռազմադաշտ:

Արարատյան գունդը, ապրիլի 15–ին դուրս գալով Քանաքեռից, Երևան–Էջմիածին–Իգդիր ճանապարհով մեկնեց պատերազմի դաշտ: Ճանապարհին ամենուրեք հայ բնակչությունը խանդավառությամբ էր ընդունում և ուղեկցում կամավորներին, իսկ Էջմիածնում բարի մաղթանքի խոսքեր ասաց և նրանց օրհնեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ն:

Բայազետ հասնելով՝ գունդը մտավ գեներալ Նիկոլաևի զորաջոկատի կազմը, որն առաջադրանք էր ստացել հարձակվելու Վանի ուղղությամբ:

Կովկասյան ճակատում ռուսական զորքերի ընդհանուր հարձակման այդ ժամանակաշրջանում ռուսական գերագույն շտաբը ձեռնարկեց հայ կամավորական խմբերի հերթական վերակազմավորումը: 1915 թ. ապրիլի 6–ի հ. 255 հրամանով հայկական խմբերը պետք է լուծարվեին, իսկ նրանց հիման վրա ձևավորվելու էին չորս կամավորական դրուժինաներ: Որպես լրացում այդ որոշման՝ մայիսի 7–ի հ. 357 հրամանով պետք է կազմավորվեին ևս հինգ նոր հայկական դրուժինաներ:

Քանի որ այդ հրամանների դուրս գալու ժամանակ գոյություն ունեցող հայկական վեց խմբերը գտնվում էին մարտադաշտում, վերակազմավորումն իրականացվեց ավելի ուշ՝ 1915 թ. օգոստոս–հոկտեմբերին:

Ըստ ռուսական բանակի հաստիքակազմի՝ յուրաքանչյուր դրուժինա բաղկացած էր 4 վաշտից և 1 հետախույզների խմբից: Սահմանվեց միասնական համազգեստ՝ կանաչ ուսադիրներով, որոնց վրա նշված էին համապատասխան դրուժինաների համարները: Դրուժինաների մատակարարման հարցը լուծում էին ռուսական կովկասյան զորքի հաստատությունները, իսկ կանոնավոր բանակից հայ սպաներ ու ենթասպաներ գործուղվեցին այդ դրուժինաները: Յուրաքանչյուր վաշտում ծառայում էր 237 դրուժին-

նիկ, իսկ դրուժինայի ընդհանուր անձնակազմը հավասար էր, ըստ հաստիքի, 1057 մարդու, որից՝ 71 հեծելազորային:

Պահեստային հայ կամավորների զորավարժեցման նպատակով ձևավորվեց նաև պահեստի դրուժինան, որը տեղաբաշխված էր Երևանում ու Քանաքեռում: Սա թվով ութերորդ դրուժինան էր, որի պաշտոնական վերջնական ձևակերպումը եղավ ավելի ուշ՝ 1915 թ. նոյեմբերին:

Կովկասյան բանակը 1915 թ. գարնանն իր գլխավոր հարվածն ուղղեց Վասպուրականի և Ատրպատականի տարածքում կենտրոնացած մեծաքանակ թուրքական զորքերի դեմ: Գտնվելով թուրքական կանոնավոր ուժի և քրդական ավազակախմբերի կողմից հաճախակի բնույթ ընդունած հարձակումների ու կոտորածների իրավիճակում՝ Վան քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչությունը դիմեց հերոսական ինքնապաշտպանության:

Վասպուրականում գործող Դաշնակցության մարմինները և մյուս հայ քաղաքական ուժերը, ժամանակին նախապատրաստելով ժողովրդի ինքնապաշտպանության գործը, միացյալ ուժերով կարողացան փրկել Վանի նահանգի հայությանը համատարած կոտորածներից:

Վանի հայության հերոսական պայքարը թուրք–քրդական մեծաքանակ ուժերի դեմ սկսվել էր 1915 թ. ապրիլի 7–ին: Սակայն հայ պաշտպանները երկար դիմադրել չէին կարող՝ մարդկանց և զենք–զինամթերքի սակավության պատճառով: «Երբ Վանը պաշարված էր,— հիշում է Ա. Խատիսյանը,— ինձ մոտ եկավ մի գյուղացի, որն իր շապկի միջից հանեց կարված մի թուղթ՝ Արամի ձեռքով գրված: Այդ թուղթը ես հանձնեցի փոխարքային: Հետևանքը եղավ այն, որ փոխարքան կարգադրեց շտապեցնել շարժումը դեպի Վան»:

Իսկ Արարատյան գնդի հրամանատար Վարդանը, այդ օրերին ներկայանալով գեներալ Օգանովսկուն, խնդրում է նրանից՝ հրամայել դեպի Վան շարժվել:

Ապրիլի 24–ին գեներալ Նիկոլաևի զորաջոկատի կազմում հայոց գունդն անցավ հարձակման՝ Վանի պաշտպաններին օր առաջ օգնության հասնելու բուռն ձգտումով: Բերկրի–Կալա հասնելուց հետո ռուս գեներալը հապաղում էր առաջ շարժվել, իսկ հայ կամավորական հրամանատարներ Վարդանը, Դրոն, Համազասպը և Քեռին առանց ռուսական զորամասերի շարունակում են հարձակումը: Գեներալ Նիկոլաևը հարկադրված իր զորաջոկատով հետևում է հայ կամավորներին և Վանից 40 վերստի վրա՝ Ջանիկում, միանում Արարատյան գնդին:

Լուր առնելով այդ մասին՝ թուրքական զորքերը նահանջում են Վանից: Խեչոն իր 150 հեծյալներով, որպես առաջամարտիկներ, մայիսի 5–ին մտավ հայոց հինավուրց մայրաքաղաքը, իսկ հաջորդ օրը Վան մտան մնացած հայկական ուժերը և ռուսական զորամասերը:

Արարատյան գունդը շուտով ազատագրեց նաև Շատախի, Մոկսի, Ապարկերտի շրջանները:

Անդրանիկի դրուժինան Պարսկաստանում մղած մի շարք հաղթական կռիվներից հետո (հատկապես նշանավոր էր 1915 թ. ապրիլի 16–18–ը տեղի ունեցած Դիլմանի ճակատամարտը), անցավ Վանի նահանգ և հունիսի

14–ին միացավ Արարատյան գնդին: Կարճ ժամանակով գոյություն ունեցած հայկական միացյալ զորամիավորումը (I–V դրուժինաներ) զգալի ուժ էր իրենից ներկայացնում՝ մոտ 5500 մարտիկներով:



Քեռի, Վարդան, Համազասպ

Կովկասյան բանակի կռվող զորամասերի հետ շարունակելով հաղթարշավը՝ հայոց գունդը մոտեցավ Բիթլիսի և Մուշի սահմաններին: Ռուսական հրանոթների ձայնն արդեն լսվում էր Մուշ և Բիթլիս քաղաքներում, չորս ժամվա ճանապարհ էր մնացել մինչև Բիթլիս հասնելը, իսկ թշնամական զորքերը լքել էին քաղաքը…

Սակայն 4–րդ կորպուսի հրամանատար Օգանովսկին 1915 թ. հուլիսի 9–ին հրամայեց Մանազկերտ–Կոփի տարածքում կռվող զորամասերին նահանջել դեպի ռուսական սահմանը: Նույն կերպ վարվեցին նաև Վանի նահանգում գտնվող զորքերը:

Ընդհանուր նահանջի ժամանակ Վանի ողջ հայ բնակչությունը գաղթեց կանոնավոր զորքի հետ: Իսկ Մուշի, Բիթլիսի և Սասունի հայերը մնացին օգնության կարոտ և դարձան երիտթուրքերի կողմից 1915 թ. մարտից այդ շրջաններում գործադրվող ցեղասպանական ծրագրի զոհը:

Նահանջեցին նաև հայ կամավորական ուժերը: Մնալով հետնապահ դիրքերում՝ նրանք գրեթե ամբողջությամբ ապահով կերպով Անդրկովկասի սահմանները հասցրին Վանի և Մանազկերտի շուրջ 200 հազար հայ գաղթականներին:

Շատ չանցած 1915 թ. օգոստոսի սկզբին, ռուսական զորամասերը հակահարձակման շնորհիվ վերագրավեցին Վանը, իսկ հայ բնակչությունն սկսեց աստիճանաբար վերադառնալ հայրենի օջախները:

Նահանջից հետո լուծարվեց Արարատյան գունդը: Սրանով ավարտվեց կամավորական շարժման երկրորդ փուլը (1915 թ. հունվար–օգոստոս):

Անդրանիկը իր մարտիկների հետ, 1915 թ.

ԱՆԿՈՒՄ ԵՎ ՆՈՐԻՑ ՎԵՐԵԼՔ

Նախկին խմբերը թիկունքում սկսեցին վերակազմավորվել դրուժինաների՝ 1915 թ. ապրիլ–մայիսին տրված բարձրագույն հրամանների համաձայն: Կամավորական շարժումը թևակոխեց իր վերջին՝ երրորդ փուլը, որը տևեց ուղիղ մեկ տարի:

Հուլիսյան դեպքերը, արևմտահայության կոտորածների մասին լուրերը մեծ բարոյահոգեբանական անկում առաջ բերեցին հայ կամավորների շարքերում: Բոլորը փորձում էին հասկանալ, թե ինչ է կատարվում, ինչու տրվեց չարաբաստիկ նահանջի հրամանը և այլն: Դեպքերից մեկ տարի անց Անդրանիկն ասել է. «Հայերի կոտորածը խրախուսող հրամանի մասին լսած չեմ, անոնց (ռուսների — Ա. Ն.) սրտերն էլ չեմ կարող կարդալ, սակայն փաստերն այնպես դասավորվեցին, որ կարող ես այդպես էլ մտածել... Մեր առաջին նահանջը Վանից մինչև հիմա էլ ինձ անհասկանալի է մնացել»:

Այնուհանդերձ, հայ կամավորական շարժումը շարունակում էր ծավալվել: 1915 թ. ամռանը Երևանում երեք հազար կամավոր էր հավաքագրվել որպես պահուստային ուժ: Նրանցից ձևավորվեց VII դրուժինան՝ իշխան Հ. Արղությանի հրամանատարությամբ, 1300 անձնակազմով:



Նիկոլ Աղբալյան

Չէր դադարել նաև արտասահմանյան երկրներից հայ կամավորների հոսքը դեպի Կովկասյան ճակատ: Ամերիկահայերը, գրեթե բոլորը, գալիս էին իրենց սեփական ծախսերով՝ միաժամանակ իրենց հետ բերելով մեծ քանակությամբ ընտիր զենքեր: Սակայն այդ զենքերը, բազմաթիվ դաշտային հեռախոսները և հեռադիտակները բռնագրավվեցին Թիֆլիսի մաքսատան կողմից ու հետագայում այդպես էլ այն չվերադարձրին իսկական տերերին: Այդ փաստը որոշ հուսաբեկություն առաջացրեց ամերիկահայերի շարքերում:

Հայ կամավորական ջոկատների վերակազմավորումը տեղի ունեցավ 1915 թ. օգոստոս–հոկտեմբեր ամիսներին: Վանի նահանջից հետո կամավորների շարքերը բավական նոսրացել էին. նրանց «մի մասը գնաց որոնելու ծնող ու ազգական»: Ազգային բյուրոն միջոցներ ձեռնարկեց կամավորների ցրվելու երևույթի դեմ, որոշում կայացրեց «ամեն գնով լրացնել խմբերը և շարունակել պայքարը Թուրքիոյ դեմ»:

Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի կարգադրությամբ (հ. 61 հրաման, 1915 թ. օգոստոսի 16) բոլոր դրուժինաները պետք է միավորվեին մեկ տեղում՝ առաջին կովկասյան սահմանապահ բրիգադի պետի ենթակայության տակ, մի բան, որը լիովին համընկնում էր Ազգային բյուրոյի ցանկությանը: Ձեռք բերելով խմբերի թվաքանակի ավելացման իրավունքը՝ բյուրոն ձգտում էր «դրանցից կազմել մեկ դիվիզիա»:

Պատերազմի ժամանակ ռուսական բանակի հետևակային դիվիզիան, ըստ հաստիքակազմի, կարող էր ունենալ 16–21 հազար անձնակազմ, 16 գումարտակ, 2–3 էսկադրոն, 1 հրետանային գունդ (6 մարտկոց) և այլն:

Ընդլայնելով հայ կամավորական ջոկատների մարտական շարքերը՝ Ազգային բյուրոն դրամական միջոցների մեծ պահանջ էր զգում. հավաքված գումարները բավարար չէին դրուժինաների բոլոր ծախսերը հոգալու համար:

Հայ կամավորների երկրորդ գնդի երդումը Քանաքեռում

Սակայն կովկասյան բանակի նոր ղեկավարությունը չիրագործեց հ. 61 հրամանը. 1915 թ. աշնանը հայկական դրուժինաները նորից բաշխվեցին ռուսական տարբեր զորաջոկատների վրա:

Պաշտոնական գրանցում ստացավ Երևանում գտնվող պահեստային կամավորական զորամիավորը: 1915 թ. նոյեմբերի 22–ին ստեղծվեց հայկական պահեստային դրուժինան (VIII)՝ մյուս դրուժինաների հաստիքային կազմին համապատասխան: Նորակազմ դրուժինայի հրամանատար նշանակվեց Նիկոլ Աղբալյանը, որը նաև կամավորական ջոկատների Զինվորական շտաբի պետն էր: Նրա օգնական հաստատվեց Սիմոն Վրացյանը:

Պահեստային դրուժինային կից Երևանում ձևավորվեցին նաև պահեստային հեծյալ կամավորական մոտ հինգ հարյուրյակ, պահեստային հրետանու մեկ դրուժինա:

Ն. Աղբալյանի գլխավորած կամավորական զորամասը մարտիկներ էր պատրաստում կռվող հայկական ջոկատների համար, ընդունում էր նոր կամավորագրվածներին և հասցնում նրանց իրենց նշանակման վայրը, ընդունում էր վիրավոր կամ հիվանդ կամավորներին իր բուժկետում: Երևանյան դրուժինան ուներ իր գրասենյակը, պահեստները և զորանոցը: Զոհված և հաշմանդամ դարձած կամավորների ընտանիքների նպաստի գործը կանոնավորելու նպատակով Թիֆլիսում ստեղծվել էր այդ խնդրով զբաղվող մարմին հմուտ փաստաբանի ղեկավարությամբ:

Հայ կամավոր մարտիկների ընդհանուր թիվը 1915 թ. վերջ—1916 թ. սկզբին կռվող յոթ դրուժինաներում և պահեստի դրուժինայում միասին կազմում էր 10 հազար մարդ, որից ռազմի դաշտում էր 8,5 հազարը:

Սմբատի գլխավորությամբ ավարտելով իր վերակառուցումը՝ առաջին կամավորական ջոկատը 1915 թ. հոկտեմբերին մեկնեց ռազմաճակատ և կռվում էր Արճեշի շրջանում:

Հայ կամավորական երրորդ գնդի զորահանդես Էջմիածնում:
Կենտրոնում հրամանատար Համազասպն է:

Ամառային դեպքերից հետո Անդրանիկը որոշել էր հեռանալ, այլևս գործ չունենալ ռուսական հրամանատարության հետ: Սակայն Ազգային բյուրոյին հաջողվեց համոզել նրան, և ժողովրդական հերոսի համբավ վայելող հրամանատարը վերադարձավ. հայրենասերի և վրիժառուի ոգին դարձյալ կանչում էր նրան կռվի դաշտ, դեպի նվիրական Երկիրը:

Նոյեմբերի վերջին Անդրանիկը նորից իր առյուծասիրտ կամավորների հետ էր և շարունակում էր մարտնչել թշնամու դեմ: 1916 թ. սկզբներին նրա դրուժինան, մարտեր մղելով Բիթլիսի ուղղությամբ, 1500 կամավորներով ու 200 հեծյալ կազակների աջակցությամբ փետրվարի 7–ին գրավեց Բիթլիսը:

Դրոյի հրամանատարությամբ երկրորդ դրուժինան կռվեց Խնուս–Մուշի շրջանում. այդ ժամանակ նրա կազմում կար 1240 մարտիկ: 1916 թ. հունվարի 13–ին ջոկատը գրավեց Խնուսը, իսկ փետրվարի 2–ին Դրոյի հեծյալ մարտիկներն առաջինը մտան Մուշ:

Երրորդ դրուժինան Համազասպի հմուտ գործողությունների շնորհիվ մեծ հաջողությունների հասավ Վանի, ապա՝ Խիզանի շրջանում: 1916 թ. մարտի 11–ին նրա դրուժինան գրավեց Խիզանը, և հայ կամավորների ջանքերի շնորհիվ թուրքական գերությունից ազատվեցին ջարդերից հրաշքով փրկված 5000 հայեր:

Չորրորդ և յոթերորդ դրուժինաները մարտնչում էին թշնամու զորքերի դեմ Ուրմիայից հարավ ընկած ճակատային տեղամասում: 1916 թ. մայիսի 15–ին Ռևանդուզի մոտ տեղի ունեցած արյունալի կռիվներից մեկում հերոսի մահով զոհվեց IV գնդի հրամանատար Քեռին (1858–1916):

Վարդանի դրուժինան 1916 թ. սկզբին Երևանից մեկնեց դեպի Ատրպատական, ուր և գտնվում էր մինչև իր լուծարման պահը:

Էրզրումի գրավման կարևորագույն օպերացիային մասնակցեց նաև հայկական VI դրուժինան:

Աշխարհամարտի Կովկասյան ճակատում ընթացող ռազմական գործողությունների շրջանում՝ 1915 թ. աշուն—1916 թ. ամառ ժամանակահատվածում, հայ կամավորները հերոսաբար կռվեցին ռազմաբեմի տարբեր հատվածներում՝ լուրջ ավանդ ներդնելով Արևմտյան Հայաստանի մեծ մասի ազատագրման գործում: Նրանք՝ որպես հետախույզներ ու առաջապահ կռվողներ, առաջինն էին օգնության հասնում ջարդերից մի կերպ փրկված արևմտահայ բեկորներին և ապահով վայրեր հասցնում նրանց:

Երկու տարվա գոյություն ունեցավ հայ կամավորական շարժումը Կովկասյան ճակատում: Հայ կամավորները փառապանծ գործերով հարստացրին ռուս–թուրքական ճակատի ռազմական տարեգրությունը:

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ

Հայ կամավորական շարժումը ժամանակի հայ քաղաքական ուժերի և կազմակերպությունների կողմից տարբեր, երբեմն ծայրահեղորեն հակադիր գնահատական է ստացել:

Անդրկովկասում ձևավորված հայ ազատական հոսանքը, պաշտպանելով Անտանտի տերություններին, համաշխարհային պատերազմում նրանց հաղթանակի ջերմ կողմնակից էր: Իրենց գլխավոր օրգան «Մշակում» (այստեղից նաև՝ *հոսանքի մշակականներ* անվանումը) նրանք շատ հստակորեն արտահայտեցին սեփական տեսակետը՝ Անտանտի կողմից պատերազմը արդարացի է, արևելահայերը պետք է աջակցեն Ռուսաստանի կառավարությանը, օգնեն նաև արևմտահայերին ինքնապաշտպանության համար միջոցներ հայթայթելու և կազմակերպեն կամավորական խմբեր: Մշակականները գտնում էին, որ արևմտահայությունը ռուսական զենքի օգնությամբ պետք է ազատագրվի օսմանյան բռնությունից ու ստեղծի Ինքնավար Հայաստան: Նրանք համոզված էին, որ ցարական պետությունը ձգտում է ազատագրելու սերբերին, լեհերին և հայերին: Թուրքական կայսրությունը պետք է կործանվի, ու նրա փոխարեն կազմվեն նոր, անկախ և ազատ պետություններ, կամ էլ այդ մասերը միանան այլ երկրների:

Սակայն ցավով պետք է նշել, որ այս հոսանքի ներկայացուցիչները 1914–1918 թթ. սեփական ուժերը իրականում գլխավորապես վատնում էին հայության քաղաքական կյանքում գերիշխող Հ.Յ.Դ.–ի դիրքերը թուլացնելու, սեփական գերիշխող դիրք ձեռք բերելու անարդյունք պայքարի վրա, այլ ոչ թե Հայկական դատի լուծման ուղղությամբ:

Ս.Դ. Հնչակյան կուսակցությունը, աշխարհամարտը սկզբնապես համարելով անարդարացի, իր վերաբերմունքը փոխեց, երբ Օսմանյան կայսրությունը մտավ պատերազմի մեջ: Եռանդուն ներգրավվելով կամավորական շարժման մեջ՝ նրանք կազմակերպեցին իրենց դրուժինան (վեցերորդը):

Հնչակյան կուսակցությունը պահանջում էր Հայաստանի ինքնավարությունը՝ դաշնակից երկրների հովանու տակ: «Դա կլինի արդարացի, մարդկային մի միջոցառում և ազգությունների սկզբունքին համապատասխանող, հանուն որի և մղվում է ներկա պատերազմը»:

Պատերազմի և հայ կամավորական շարժման վերաբերյալ տրամագծորեն հակառակ դիրքորոշում ունեին հայ բոլշևիկները: Սկսված համաշխարհային կռվի պայմաններում ճիշտ բնորոշելով պատերազմը որպես անարդարացի, իմպերիալիստական՝ նրանք չէին ընդունում այն իրողությունը, որ հայերը, մի քանի այլ ազգերի նման, նույնպես կարող են ազատագրվող, արդարացի կողմ համարվել այդ նույն պատերազմում: Երբ սկիզբ առավ ու ծավալվեց հայ կամավորական շարժումը, երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունը խիստ բացասաբար վերաբերվեց դրան: Կովկասյան բանակում, տարբեր հաստատություններում և այլուր անլեգալ գործող հայ բոլշևիկները քննադատում էին շարժումը, փորձում վարկաբեկել այն ու նրա ղեկավարներին: Նրանք բացասական վերաբերմունք դրսևորեցին հայ կամավորական շարժման նկատմամբ, մի շարժում, որը հայ ազգային–ազատագրական պայքարի կոնկրետ արտահայտությունը եղավ 1914–1916 թվականներին:

Ոչ միայն բոլշևիկները, այլ նաև որոշ քաղաքական գործիչներ ու մտավորականներ այն օրերին, ինչպես և որոշ հեղինակներ մեր օրերում, կամավորական շարժումը համարել են որպես Հայոց եղեռնի պատճառ կամ առիթ, իբր, եթե չլիներ այդ շարժումը, կոտորածներ չէին լինի:

Մեր կարծիքով՝ դա միանգամայն թյուր և սխալ տեսակետ է: Հայության հանդեպ թուրքական պետության այն ժամանակվա ղեկավարների քաղաքականությունը կանխորոշված էր մինչև համաշխարհային պատերազմի սկսվելը: Հայերին երկու ելք էր թողնված՝ կա՛մ թուրքացվել, ձուլվել տիրապետող թուրք հետամնաց տարրի մեջ, կա՛մ անհետանալ Հայաստանից ու Օսմանյան Թուրքիայի սահմաններից՝ կոտորածների և բռնագաղթեցման ճանապարհով: Պանթյուրքիստները հայերի համար ուրիշ ելք չէին թողել: Ճիշտ է, հայ կամավոր խմբերի ստեղծման փաստը շահարկվեց երիտթուրքերի կողմից, բայց չպետք է փոքր իսկ կասկած ունենալ, որ պանթյուրքիզմի գաղափարներով արբեցած թալեաթների, էնվերների և այլոց համար դժվար չէր (ու այդպես էլ եղավ), այլ առիթներ, պատրվակներ գտնելը կամ հորինելը հայերին կոտորելու համար:

Արևմտահայերի համար գոյություն ուներ իրատեսական ու փրկարար թերևս, այսպիսի ելք. դա Առաջին աշխարհամարտի տարիներին ստեղծված կոնկրետ–պատմական իրավիճակում, ռուսական զորքերի ու նրանց հետ կողք կողքի կռվող հայ կամավորական ջոկատների օգնությամբ օսմանյան տիրապետությունից շուտափույթ ազատվելն էր:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, ինչպես վերը նշվել է, միանշանակ վերաբերմունք չուներ ռուս–թուրքական պատերազմին հայերի մասնակցության հարցի առնչությամբ: Արևմտյան Հայաստանում գործող դաշնակցական մարմինները որոշել էին չեզոքություն պահպանել, իսկ Կովկա-

սում տիրապետող դարձավ կամավորական խմբերով այդ պատերազմում հանդես գալու տեսակետը:

Դաշնակցության Արևելյան բյուրոն գլխավորեց կամավորական ժողովրդական շարժումը՝ ունենալով գերակշռություն Հայոց ազգային բյուրոյում:

Այսպիսով՝ պատերազմի սկզբնական շրջանում Դաշնակցության շարքերում միասնական տեսակետ չկար: Իսկ չեզոքության դիրքորոշումը իրականում իրեն չարդարացրեց:

Այն ծանր ու դժվարին օրերին արևմտահայության ու Հ.Յ.Դ. շարքերում տիրող հոգեբանական մթնոլորտը շատ դիպուկ բնութագրել է Կարո Սասունին: Նրա վկայությամբ՝ Դաշնակցությունը ռուսական կողմնորոշում չուներ, այլ այդ կողմնորոշումը միշտ բացահայտվում էր՝ նկատի ունենալով Թուրքիան: Դաշնակցությունը և հայ ժողովուրդը «հակվում էին այն ուժերի կողմը, որոնք ակնհայտ ձգտում ունեին վնասելու թուրքին և քայքայելու նրա պետությունը»: Երբ սկսվեց աշխարհամարտը, նրանք «պատրաստ չէին վճռական դիրք բռնելու»: Արևմտյան Հայաստանի և ամբողջ Թուրքիայի մեջ «հայությունը կծկվում էր հնազանդության և ինքնապաշտպանության վարագույրի հետևում, սպասողական վիճակում ու անզեն»:

Հնազանդությունն ու ինքնապաշտպանությունը, Կ. Սասունիի խոսքերով, անխելքություն էին, պարզ կարճամտություն, թուրքերին խաբելու միամտություն: Ինքնապաշտպանությունն այդ ժամանակ Թուրքիայի մեջ կարելի էր միայն ապստամբությամբ, վճռական ու խիզախ, Վանից մինչև Կիլիկիա: «Երկվությունը և տատանումը մնացին իրենց ուժի մեջ: Ամբողջ հայությունը միակամ և միադեմ հրապարակ չեկավ: Դեպքերը եկան ու գահավիժորեն մեր վրայից անցան»:

Ռուսական ինքնակալության հետ համաձայնության գալով՝ Դաշնակցությունը բնականաբար չէր սահմանափակվել միայն ռուսներին աջակցելու գործունեությամբ:

1914 թ. վերջին Հ.Յ.Դ. Արևելյան բյուրոն շարքերին հղված մի շրջաբերականով հայտնում էր. «Կամավորների կազմակերպումով մենք նպատակ ունենք մեր մասնակցությունը բերելու այս պատերազմին, որով և ընդհանուր հաշվեհարդարի (հաշտության — Ա. Ն.) միջոցին ավելի մեծ իրավունքով պահանջելու, որ գումարվելիք վեհաժողովը լուծի մեր հարցն էլ: Մենք հույս ունենք, որ Եռյակ համաձայնության հաղթությամբ… թուրքաց Հայաստանը կստանա ավտոնոմիա»: Որպես օրվա առաջնահերթ խնդիր էր նշվում արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպումը:

Հայության այն ժամանակվա ղեկավար ուժը վարում էր նաև հեռուն գնացող քաղաքականություն, Հայաստանի ինքնավարությունը դեռևս ազգային շարժման վերջնակետը չէր: Ինքնավարություն ձեռք բերելուց հետո Դաշնակցության նպատակն էր լինելու հասնել Հայաստանի անկախությանը:

Դաշնակցության գործունեության՝ այդ ուղղությամբ տարվող աշխատանքների մասին կան բազմաթիվ փաստաթղթեր ու վկայություններ: Գաղտնաբար տարվող այդ քայլերի մասին կան վկայություններ Կովկասի փոխարքայության հատուկ ծառայությունների կողմից հավաքված նյութե-

րում, ինչպես նաև դեպքերի մասնակիցների ու ժամանակակիցների՝ հետագայում լույս տեսած հուշագրություններում:

Գարեգին Նժդեհը իր զինակիցների հետ

Պատերազմի իրավունքով Թուրքիայից գրավված մարզերի ռուսական վարչակազմի ներկայացուցիչ իշխան Գաջեմուկովը փոխարքային տված իր մի զեկուցագրում (1916 թ. հունվարի 21) նշում էր, որ արևմտահայերը գտնվել ու շարունակում են մնալ ծանր, ողբերգական պայմաններում, ուստի հարկ չկա ավելորդ հայասիրություն ցուցաբերելու, հայերին ավելորդ կանխավճարներ տալու. «Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ բոլոր հայտնի հայ քաղաքական կուսակցություններն իրենց նշանաբան են դրել Թուրքիայից ազատագրվել Ռուսաստանի օգնությամբ, վերջինիս դեմ էլ հետագայում անհապաղ ուղղել իրենց պայքարի ողջ ուժը»:

Արդեն Դերսիմի շրջանի պետի պաշտոնում աշխատելու ժամանակ նույն Գաջեմուկովը մեկ այլ զեկուցագրում (1917 թ. մարտի 14) ասում էր, թե հայերը թուրքերի դեմ կազմակերպվելու համար ընձեռված ազատությունը չարաշահեցին՝ զբաղվելով Ռուսաստանի դեմ պայքարի նախապատրաստությամբ: Դրա համար էլ տրված ազատությունը սահմանափակվեց, իսկ հայկական դրուժինաները լուծարվեցին, ձևավորվեցին առանձին հայկական գումարտակներ: Ըստ նրա՝ քաղաքական տեսակետից այդ գումարտակներն անցանկալի են, որն էլ իրեն զգացնել կտա ապագայում:

Ռուսական հետադեմ վարչակազմի ներկայացուցիչը զարմացած էր հայ քաղաքական ուժերի, հիմնարկությունների և տարբեր մարդկանց «հիանալի կազմակերպված համակարգից»՝ անվանելով այն ամենամեծ չարիքը:

Սակայն դա դեռ բոլորը չէ: «Հայերի վերջին փորձերը՝ քրդերին իրենց բացառիկ ազդեցության ոլորտը գցելու և ապագա անկախ Հայաստանի ստեղծման շահերին նրանց ծառայեցնելու համար, պետք է համարել անթույլատրելի»: Հայկական ազգային գործի մեջ «քրդերին ներգրավելու նպատակով այս պարոնները հսկայական գումարներ են ծախսում»,— հայտնում էր Գաջեմուկովը:

Հայ կամավորական շարժման նկատմամբ ցարական իշխանության իրական վերաբերմունքն արտահայտել էր դեռ նախկին փոխարքա Վորոնցով–Դաշկովը, որը «հայասեր» գործչի համբավ էր վայելում: 1915 թ. մայիսի 24–ի՝ ռուսական գերագույն զորակայան ուղղված իր գաղտնի զեկույցում նա գրում էր. «Հայերի մեջ ազգայնական գաղափարներ, անշուշտ, կան և կազմում են նրանց բաղձալի երազանքը, բայց դժվար թե մեզ համար կարող է վտանգ ներկայացնել 4–5 հազար կազմով հայկական դրուժինաների գոյությունը... Ավելի վնասակար են ընդհատակում գործող ռմբաձիգ կազմակերպությունները, որոնք հարություն կառնեն դրուժինաների կազմացրման դեպքում... Եթե նույնիսկ Վանը հետ վերադարձվի թուրքերին, ապա մնացած դրուժիննիկները կհանդիսանան խաղաղ ժամանակներում Թուրքիայի դեմ պայքարի միջուկը, ու հենց այնտեղ կգնան և՛ ռմբաձիգները, և՛ ընդհանրապես անհանգիստ հայ տարրը»:

Առջևում ձախից աջ՝ Յապոնը, Արմեն Գարոն, Խեչոն, Դրոն, Քանաքեռ

Հ.Յ.Դ.–ի և Հայոց ազգային բյուրոյի՝ հեռուն գնացող ծրագրի մի մասն էր կազմում ապագա անկախ Հայաստանի ազգային բանակի հիմքերի ստեղծումը կամավորական ջոկատների միջոցով: Ազգային բանակի ապագա կադրերը պետք է աճեին, ռազմական մկրտություն ու կարևոր փորձ

ձեռք բերեին կամավորական շարժման բովում: Ս. Վրացյանի նամակներից մեկը, որում խոսվում էր այդ մասին, ընկնում է Թիֆլիսի քաղաքային ժանդարմական վարչության պետ, գնդապետ Պաստրյուլինի ձեռքը:

Հարկ է շեշտել, որ հայ ժողովրդի ու նրա քաղաքական ղեկավար մարմինների առջև ծառացած, նրանց բոլորին հուզող առաջնահերթ հարցը Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության մյուս շրջանների հայերի ֆիզիկական փրկության ապահովման խնդիրն էր:

Իսկ քաղաքական կարևորագույն մոտակա պահանջը Հայաստանի ինքնավարության հաստատումն էր: Որպեսզի պատերազմի ավարտից հետո հաշտության վեհաժողովում հայերի այս պահանջը լսելի դառնար ու արդյունքի հասներ, հարկավոր էր սեփական զինական ուժով հանդես գալ ռուս–թուրքական ճակատում:

Դա հնարավորություն կընձեռեր, ի տարբերություն 1878 թ. Բեռլինի վեհաժողովի, «երկաթե շերեփի» իրավունքով պահանջելու արևմտահայերի խնդրի լուծումը: Նման իրավունք տվող ուժի դեր էր կոչված խաղալու հայ կամավոր զինվորականությունը: Շարունակաբար ծավալելով կամավորական շարժումը՝ Ազգային բյուրոն մտադիր էր հայկական դրուժինաներում ընդգրկված մարտիկների թիվը հասցնել 50 հազարի, սակայն մի շարք պատճառներով 1914–1916 թթ. դա իրագործել չհաջողվեց:

Ռուսական ռազմաքաղաքական շրջանակները տեղյակ էին հայերի ինքնավարական ու անկախական ծրագրերի մասին, որոնք բոլորովին չէին համապատասխանում նրանց մերձավորարևելյան շահերին: Այդ նույն շահերից ելնելով էլ Կովկասի վարչակազմը թույլատրեց հայ կամավորական ջոկատներ ստեղծել և օգտագործեց հայերի զինուժը ռուս–թուրքական ճակատում:

Սակայն ռուսական իշխանությունը դրսևորում էր բացառիկ զգուշավորություն՝ սահմանափակվելով կիսատ–պռատ քայլերով ազգային զորամասերի ստեղծման ու նրանց օգտագործման ուղղությամբ իրականացվող իր քաղաքականության մեջ: Ցարական վարչակարգը վստահ չէր, որ կարող է մշտապես վերահսկել մեծ քանակությամբ կամավոր ուժերին, ուստի բավարարվեց նման ջոկատների սակավաթիվ գոյությամբ Կովկասյան ճակատում՝ մասնատելով ու բաշխելով հայկական դրուժինաները ռուսական տարբեր կորպուսների վրա. բացառություն է կազմում միայն Արարատյան գնդի գոյությունը 1915 թ. ապրիլ–հուլիս ժամանակահատվածում:

Մեր կարծիքով՝ ռուս–թուրքական պատերազմի ժամանակ հայերը չէին կարող չեզոք մնալ, եթե անգամ դա ցանկանային էլ:

Քանի որ ռազմական գլխավոր իրադարձությունները Կովկասյան ճակատում տեղի էին ունենում Հայաստանի տարածքում, ապա արևելահայերն ու արևմտահայերը չէին կարող պահպանել չեզոքություն, սպասել պատերազմի ավարտին և հետո հաղթող կողմի հետ փորձել համաձայնեցնել կամ ստանալ նրա աջակցությունը Հայկական հարցի լուծման նպատակով: Պատմական այդ իրադրության պայմաններում ամենահիրատեսական ուղին

Ռուսաստանի ռազմական օգնությամբ թուրքական բարբարոս տիրապետությունից «ազատագրվելն» էր:

ՇԱՐԺՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի տարբեր հատվածների ու խավերի ներկայացուցիչներից ձևավորված կամավորական զորամիավորները հերոսաբար կռվեցին Կովկասյան ճակատում՝ մեծ ավանդ ներդնելով ռուսական կովկասյան զորքի տարած մի շարք փայլուն հաղթանակների գործում: Ինչպես, օրինակ՝ Սարիղամիշի և Դիլմանի նշանավոր ճակատամարտերը, Վանի ազատագրումը, Ալաշկերտի, Էրզրումի խոշոր մարտական գործողությունները, Խնուսի, Մուշի, Բիթլիսի, Խիզանի, Բաբերդի և Երզնկայի գրավման համար մղված մարտերը:

Փառապանծ հայ ազատամարտիկները կարևորագույն դեր խաղացին Վանի, Ալաշկերտի, Ատրպատականի, Բասենի, Մուշի, Խնուսի և այլ վայրերի՝ կոտորածից փրկված հայ բնակչության մի ստվար զանգվածի՝ մոտ 300 հազար մարդու կյանքի անվտանգության ապահովման, դեպի Կովկաս նրանց ներգաղթը քիչ կորուստներով անցկացնելու գործում:

Հայ կամավորների մարտական սխրանքներն այնքան ակնառու էին, որ ռուսական ոչ բարյացակամ բարձրագույն հրամանատարությունն անգամ չէր կարող չնշել դրանք: Ս. Վրացյանի վկայությամբ՝ «Գործող բանակի ռուս հրամանատարները գովեստով են խոսում նրանց մասին, գնահատում ու մեկմեկի ձեռքից խլում հայ գնդերը, վարձատրում նրանց մեդալներով ու խաչերով: Ռուս զինվորն ու կազակը եղբայրական վերաբերմունք են ցույց տալիս դեպի մեր կամավորները, սիրում նրանց, որովհետև նրանք համարձակ կռվողներ են»:

Իրենց հրամանատարական ձիրքով և ռազմական քաջությամբ աչքի ընկան Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Վարդանը, Հ. Արղությանը, իսկ Ավշարյանը և Քեռին հերոսի մահով ընկան մարտի դաշտում:

Հայ կամավորների հրամկազմից մի քանիսի վերաբերյալ ուշագրավ է գեներալ Թովմաս Նազարբեկյանի գնահատականը: Համազասպին նա բնորոշում է որպես քաջ ու լավ կռվող պարտիզանի, իսկ Դրոն՝ բնական օժտվածությամբ, հոգով զինվորական, «ինքնուսուցմամբ հասկանում է ռազմական գործը… բայց տեսականորեն կրթված չէ և ընդունակ չէ նստակյաց աշխատանքի»: Նրա կարծիքով՝ «նապոլեոնյան պատերազմների դարաշրջանում նրանից՝ մշտապես առաջադիմող պրակտիկայով, խելացի մարշալ դուրս կգար»:

Մեծ ճանաչման արժանացան նաև հարյուրավոր նախկին ֆիդայիներն ու հազարավոր երիտասարդ ազատամարտիկները: Հայ կամավորներն ստացան մոտ 500 Գեորգիևյան խաչեր ու մեդալներ, իսկ Գեորգիևյան խաչի բոլոր չորս աստիճաններն ստացան Դրոն, Ղազարը, Սմբատը: Պարգևների արժանացան նաև Սեբաստացի Մուրադը, Խեչոն (զոհվեց 1915 թ. հուլիսի 8–ին),

Սաֆարը, Արտաշեսը և շատ ուրիշներ: Հայ քաջարի կամավորներից մոտ 800 հոգի զոհվեց արևմտահայության ազատագրման համար մղված պայքարում:

Այնուհանդերձ, որքան էլ որ տարբեր լինի հայ քաղաքական շրջանակների, հասարակության զանազան ուժերի կողմից այն տարիներին ու նաև մեր ժամանակներում տրված գնահատականը, հայ կամավորական շարժումն իր էությամբ ժողովրդական էր, հայության ազատատենչ ոգու և ազգային պայքարի արտահայտությունը: «Անցյալի մարտական փորձը, տեղանքի ու թշնամու սովորույթների իմացությունը, խոր հավատը սեփական գործի ճշմարտացիության մեջ... պայմանավորեցին, ամենից առաջ, կազմակերպվելու բացառիկ արագությունը, ապա և՝ ռազմի դաշտում մի շարք փայլուն հաղթանակները»:

Չնայած այն բանին, որ շարժումը ծավալվեց ցարիզմի թույլտվությամբ, դա ամենևին էլ չի փոխում հայ կամավորական շարժման ազգային–ազատագրական բնույթը:

Եթե հայ կամավորական շարժման հասցեին քննադատելու խոսք լինի, ապա դա կարող է լինել այն կապակցությամբ, որ շարժումը նախատեսված մեծ չափերին չհասավ, առավելագույնն ունեցավ 10 հազար մարտիկ, այնինչ մոտ 2–3 անգամ ավելի ուժի առկայության դեպքում Կովկասյան ճակատի ռազմական տարեգրությունը 1915 թվականին ուրիշ ընթացք կունենար, իսկ արևմտահայությունը քիչ կորուստներով դուրս կգար պատերազմից: Ապացույցը Վանի հերոսական ինքնապաշտպանությունն է, որը, ցավոք, հայկական մյուս նահանգներում շարունակություն չգտավ:

Չորրորդ գնդի հրամանատար Քեռին՝ իր զինակիցներով

Կամավորական շարժման նշանակությունը ներկայացնելիս անպայման պետք է կարևորել այն փաստը, որ հայ կամավոր զինուժի հետ միասին Հայաստանի ազատագրվող տարածք էր մուտք գործում նաև ազգային վարչական կառույցը:

1915 թ. մայիսի 7–ին Վանի նահանգապետ է նշանակվում հայտնի քաղաքական ու ազգային գործիչ Արամ Մանուկյանը: Արդեն հաջորդ օրը ձևավորվում և սկսում են գործել Վան քաղաքի և նահանգի գավառների կառավարման մարմինները՝ նահանգային խորհուրդը և վարչությունը, կրթական և ոստիկանական տեսչությունները, քաղաքապետարանը, գավառային վարչությունը, դատարանը և այլն: Վանի նահանգը բաժանվում է 4 գավառների և 12 գավառակների:

Իշխանության մարմիններում ընդգրկվում են միայն հայերը, առաջին հերթին՝ Վանի մտավորականության լավագույն ներկայացուցիչները՝ անկախ կուսակցական պատկանելությունից և սոցիալական ծագումից: Հրավիրվում են նաև վարչական աշխատանքի փորձ և հմտություն ունեցող ռուսահպատակ հայեր: Քաղաքը և ազատագրված գավառները կարճ ժամանակում բնականոն հունի մեջ մտան:

Ներքին կարգ ու կանոնը պահպանելու և գավառներ վերադարձող հայ ու ասորի բնակչությանը քրդերից պաշտպանելու նպատակով կազմակերպվում է ոստիկանություն: Բնակչությանը տրվում են զենք կրելու արտոնագրեր, որոնք լրացված էին երկու լեզուներով՝ հայերեն ու ռուսերեն:

Տեղի իշխանությունների առաջնահերթ խնդիրներից էր երկրագործական աշխատանքների անհապաղ վերսկսումը, որովհետև 1915 թ. ապրիլից դրանք դադարեցվել էին: Նահանգապետի նախաձեռնությամբ՝ տուժած բնակչության համար հանգանակվեց 1000 փութ ցորեն, 8–10 հազար ոչխար, ավելի քան 2 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

Ձախից աջ՝ Արամ Մանուկյան, Փանոս Թերլեմեզյան, Սեմերջյան, Գալիկյան



Դեպի Արևմտյան Հայաստան երկրորդ արշավանքը, 1915 ապրիլ–հունիս

Արամ Մանուկյանի հատուկ հրահանգով գավառապետերին հանձնարարվեց հետաքննել ու փաստագրել թուրք և քուրդ հրոսակների կատարած բարբարոսությունները:

Ժամանակակիցներից մեկի դիպուկ բնորոշմամբ՝ «Վանը լռելյայն բոլորի մեջ դառնում է հայոց առաջին մայրաքաղաքը, ուր կա հայ իշխանություն, հայ բանակ, հայ վարչական կազմ… Հայոց անկախության առաջին

ճառագայթն է այս: Պատմության մեջ անջնջելի մի վարձատրություն պիտի մնա այս իրողությունը. վարձատրություն հայ մարտնչող ժողովրդին, վասպուրականցուն, վարձատրություն նաև հայկական ազատարար կամավորական բանակին»:

Երկրորդ գնդի վաշտապետերը

Վանի նահանգում ազգային պետականության կերտման այս կարճատև փորձը հետագայում շատ հմտորեն օգտագործվեց Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերում (Էրզրում, Վան, Խնուս) 1917 թվականին, և որ առանձնակի պետք է նշել՝ զարգացում ստացավ Երևանի նահանգում 1918 թ. առաջին կեսին՝ նույն Արամ Մանուկյանի գլխավորությամբ: Այս գործընթացի արդյունքում ի վերջո վերածնվեց հայոց անկախ պետականությունը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հայ կամավորական շարժումը, աստիճանական ընթացքով աճելով, դուրս եկավ ցարիզմի «թույլտվության» շրջանակներից, որն էլ դարձավ հայկական կամավորական ջոկատները կազմացրելու գլխավոր պատճառը:

Այնուհանդերձ ռուսական վարչակազմը չհամարձակվեց լիովին վերացնել Կովկասյան ճակատում եղած հայկական զինական ուժը՝ զգուշանալով հայ ազգային–հեղափոխական ուժերին իր դեմ հանելուց:

Վանի բերդը

Արդեն ասվել է, որ 1915 թ. վերջերին ուժերի հարաբերակցությունը ռուս–թուրքական ճակատում կտրուկ փոխվել էր հօգուտ ռուսների, հետևաբար քիչ թե շատ ինքնուրույնություն ունեցող հայ կամավորական ջոկատների առկայությունը տեղ չուներ ցարիզմի ռազմաքաղաքական հետագա ծրագրում:

Արևմտյան Հայաստանի մեծ մասի գրավումից հետո Ռուսաստանը նվաճված հայկական, բայց արդեն հայաթափված նահանգները պահելու և յուրացնելու գործում իր գլխավոր հույսը կապեց քրդերի հետ, ինչպես նաև՝ ծրագրել էր ռուս գաղութաբնակներով (գլխավորապես՝ կազակներով) բնակեցնել հայկական մարզերը:

Ռուսական վարչակազմի առավել հետադեմ ու հակահայ գործիչները՝ փոխարքա Ն. Ռոմանովը, գեներալներ Յուդենիչը, Յանուշկևիչը, իշխաններ Օռլովը, Գաջեմուկովը և այլք, իրականացնելով քրդամետ ու գաղութային քաղաքականություն, մտադիր չէին հանդուրժելու հայկական ռազմական ուժի ներկայությունն այդ տարածքներում: Ահա թե ինչու կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը չհամաձայնվեց 1915 թ. սեպտեմբերին հայկական ջոկատները մեկ դիվիզիայի մեջ կենտրոնացնելու որոշման հետ, որից հետո հայկական կամավորական դրուժինաները կրկին տարանջատվեցին:

Հայոց ազգային բյուրոն աշխատում էր ոչ թե բոլորովին լուծարել, վերացնել հայ ռազմական ուժը Կովկասյան ճակատում, այլ վերակազմավորել դրանք ռուսական բանակի կանոնավոր, մշտական զորամիավորների: 1915 թ. վերջին Ազգային բյուրոն դիմեց ռուսական հրամանատարությանը՝ միջնորդելով, որ հայկական դրուժինաները վերածվեն հրաձգային գումարտակների: Ձեռք բերված փոխադարձ համաձայնության արդյունքում ռուսական վարչակազմը իրավունք տվեց իրականացնելու վերակազմավորում և ստեղծելու զուտ ազգային նկարագրով 6 հայկական հրաձգային գումարտակներ:

Հայոց ազգային բյուրոյի հետ ռուսական շտաբը համաձայնության եկավ գումարտակների ձևավորման տեղի, ժամանակի, հերթականության և համալրման հարցերի շուրջը:

Հայկական կանոնավոր զորամիավորները համալրելու էին արևելահայ զինապարտները, փորձ ունեցող սպայական և հրամանատարական կադրերը: Ցանկության դեպքում նրանց շարքերը կարող էին մտնել նաև արևմտահայ կամավորները, որոնք այդ դեպքում ծառայելու էին ընդհանուր հիմունքներով՝ որպես մշտական զորքի զինծառայողներ:

Որոշված էր դրուժինաների վերակառուցման հետևյալ ձևը. 2–րդ դրուժինայի հիման վրա կազմվում էր I հայկական հրաձգային գումարտակը, 3–րդ դրուժինայից՝ II գումարտակը, 4–րդից՝ V գումարտակը, 5–րդից՝ IV գումարտակը, 6–րդից՝ III գումարտակը, 7–րդից՝ VI գումարտակը:

Թուրքերից գրավված թնդանոթը

Անդրանիկի դրուժինան լուծարվեց, նրանից գումարտակ չկազմավորվեց, ինչպես և Երևանում գտնվող պահեստային (VIII) դրուժինայից: Հայ կամավորները բոլորն էլ միանվագ նպաստ ստացան իրենց ծառայության ժամանակամիջոցին համապատասխան: Այդ նպաստը տրվում էր այն հաշվով, որ ճակատից վերադարձող հայ դրուժիննիկները մինչև որևէ աշխատանք գտնելը ապրուստի միջոց ունենային:

Հայ կամավորական շարժման նկատմամբ ցարական կառավարության այս գործելակերպը մեծ հուսախաբություն առաջացրեց հայ դրուժիննիկների միջավայրում: Նրանց մեծ մասը թողեց ռազմական ասպարեզը, հեռացավ զինծառայությունից, իսկ արտասահմանից եկած հայ կամավորները

վերադարձան իրենց բնակավայրերը: Մոտավոր հաշվարկով՝ նորակազմ հայկական գումարտակների շարքերում ընդգրկվեցին մոտ երկու հազար նախկին կամավորներ:

Փոխարքան կարգադրել էր երկրամասի նահանգային իշխանություններին խիստ վերահսկողության տակ առնել կանոնավոր բանակի մեջ չընդգրկված հայ կամավորներին:

Ճակատ մեկնելու պատրաստ հայ զինվորները

Իշխան Օռլովը 1916 թ. ապրիլի 22–ի իր գաղտնի նամակով տեղեկացնում է փոխարքայի զինվորական գծով օգնական Յանուշկևիչին, որ Կովկասում գտնվող հայ նախկին դրուժիննիկների մի մասը մտադիր է խմբեր կազմելու, տարածվելու ողջ երկրամասում ու զբաղվելու «համահայկական գործի» համար միջոցների հայթայթմամբ: Նրա կարծիքով՝ հարկավոր է «խստագույն միջոցներ կիրառել»՝ ապահովելով վերահսկողությունը հայկական գումարտակների շարքերը չմտած հայ կամավորների նկատմամբ:

Կազմավորված հայկական հրաձգային վեց գումարտակները, ինչպես և նախկինում կամավորական ջոկատները ռուսական բանակի կովկասյան զորքերի գլխավոր հրամանատարության կողմից տեղաբաշխվեցին գործող բանակի տարբեր կորպուսների վրա: 1917 թ. հունվարի 1–ի դրությամբ այդ տեղաբաշխումն այսպիսին էր՝ I գումարտակը (հրամանատար՝ գնդապետ Պ. Բեժանբեկ) գտնվում էր I կովկասյան կորպուսի կազմում, Երզնկա–Դերջան տեղամասում, II գումարտակը (փոխգնդապետ Ս. Սամարցյան)՝ IV կորպուսի կազմում, Խնուս–Մուշում, V գումարտակը (գնդապետ Պ. Փիրումյան)՝ IV կորպուսի կազմում, Վանում, II կովկասյան հեծյալ կորպու-

սի մեջ էին մտնում III, IV և VI գումարտակները (գնդապետ Ա. Տեր–Նիկողոսյան, փոխգնդապետներ Ա. Հովսեփյան և Մ. Մելիք–Մուրադյան), որոնք գտնվում էին Ուրմիա լճից հարավ ընկած ճակատային տեղամասում:



Հայկական վեց գումարտակներում այդ ժամանակ կար 5719 մարտիկ, իսկ ավելի քան հազար հայ զինվորական առանձնացված էր Կովկասի ռազմական օկրուգի պահեստային զորքերում, որպեսզի նրանց հաշվին համալրվեին գումարտակները: Այսպիսով՝ կովկասյան բանակի կազմում գտնվող հայկական գումարտակներում և նրանց համար նախատեսված պահեստային զորամիավորի մեջ միասին հաշվվում էր մոտ 7000 մարտիկ:

Ամփոփելով նշենք, որ հայ կամավորական ջոկատների լուծարման և նրանց հիմքի վրա հայկական հրաձգային գումարտակների կազմավորման միաժամանակ տեղի ունեցած գործընթացների արդյունքում Կովկասյան ճակատում երկու տարի շարունակ մարտնչող հայ կամավորական զինական ուժը վերածվեց կանոնավոր հայկական մարտական ուժի: Հրաձգային գումարտակները արժանիորեն շարունակեցին կամավորական ջոկատների ռազմական տարեգրությունը, իսկ հաջորդ տարվա ընթացքում նրանցից ձևավորվեցին վեց հայկական գնդեր, ապա դրանց ծավալման շնորհիվ՝ երկու բրիգադ, երկու դիվիզիա և վերջապես՝ հայկական բանակային կորպուսը:

* * *

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտի տարիներին ունեցած մարդկային և նյութական ծանր կորուստների կողքին հայ ժողովուրդը կարողացավ ազգային–ազատագրական պայքարի այս բարդ շրջանի ավարտին համախմբվել, հավաքել ներուժը և վերականգնել իր ազգային անկախ պետականությունը Հայրենիքի մի փոքր տարածքում: Այդ գործում մեծ ավանդ ունի Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ստեղծված հայկական զինական ուժը: Իր ռազմաքաղաքական տարեգրությունը սկսելով կամավորական շարժումից՝ այն աստիճանաբար աճեց, ամրապնդվեց և վերածվեց կանոնավոր բանակային զորամիավորման՝ Առանձին հայկական կորպուսի: Իսկ վերջինիս հենքի վրա հետագայում կազմավորվեց Հայաստանի Առաջին Հանրապետության բանակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դրօշակ, 1913–1914:
2. Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Դ, Պէյրութ, 1985:
3. Դրո: Հուշեր, վկայություններ, Ե., 1991:
4. Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը. 1914–1917, Բոսթոն, 1924:
5. Համառոտ տեղեկագիր Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոյի գործունեության. 1915–1917, Թիֆլիս, 1917:
6. Հայրենիք, ամսագիր, Փարիզ, 1923, հ. 2, 1927, հ. 11:
7. Հորիզոն, 1914–1918:
8. Մշակ, 1914–1915:
9. Армянский вестник, 1916–1918.
10. Ասրյան Ա. Արամ Մանուկյանի կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Ե., 2005:
11. Խատիսյան Ա., Քաղաքապետի մը հիշատակարանը, Բեյրութ, 1991:
12. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. 1828–1923, Ե., 1972:
13. Հայկական հարց, հանրագիտարան, Ե., 1996:
14. Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Ե., 1984:
15. Նազարյան Ա., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914–1918 թվականներ), Երևան, 1999:
16. Ռոստոմ (Մահվան վաթսունամյակի առթիվ), Բեյրութ, 1979:
17. Ռուբէն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. է, Լոս–Անջելոս, 1952:
18. Սասունի Կ., Թուրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914–1918), Բեյրութ, 1966:
19. Սեպուհ, էջեր իմ հուշերէն, հատոր Ա, Բոսթոն, 1925:
20. Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէյրութ, 1962:
21. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով (դէպքեր, դէմքեր, ապրումներ), հ. Գ, Պէյրութ, 1963:
22. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետությունը, Ե., 1993:
23. Տասնապետյան Հ., Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդհանուր Ժողովը (1890–1924), Աթէնք, 1988:
24. Փափազյան Վ., Իմ հուշերը, հատոր 2, Բեյրութ, 1952:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԻՆ 6
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ 10
ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ 17
ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ 21
ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ 31
ԱՆԿՈՒՄ ԵՎ ՆՈՐԻՑ ՎԵՐԵԼՔ 41
ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ 45
ՇԱՐԺՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 51
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ 55
Գրականության ցանկ 61

«ՀԱՅ ԴԱՏ» ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԹԻՎ 2

Արամ Սրապիոնի Նազարյան
պատմագիտության թեկնածու

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1914–1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հրատարակչության տնօրեն՝	Է.Ս. Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝	Ա.Ա. Բաղդասարյան
Վերստուգող սրբագրիչ՝	Ն.Ն. Փարսադանյան
Սրբագրիչ՝	Լ.Բ. Միքայելյան
Համակարգչային ձևավորումը՝	Գ.Ա. Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 15x22 սմ: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 4 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 1000 օրինակ:

Տպագրված է «ԶԱՆԳԱԿ–97» հրատարակչության տպարանում
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28
Հեռապատճեն՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am
էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am

www.armeniancause.am

ԵՐԵՎԱՆ • 2011